Ազգ
AZG
armenian newspaper

Հուլիս 31. 1991
Չորեքշաբթի
եռօրյա թերթ.
Ա տարի, թիվ 48
գինը 30 կ.

հասցեն՝ Երեւան 375010
Հանրապետության 47
խմբագիր՝ 581841
ֆաքս՝ 582941
տելեքս՝ 243267 SULA SU

ГКП-Арм.ССР
им. А. Мясникяна

Հ. Սասունյանի վկան ստել էր. նրա գործը կարող է բեկման ենթարկվել

9 տարի առաջ Լոս Անջելեսում թուրքական հյուպատոսի ահաբեկման հանցանքով եւ ցմահ բանտարկության դատապարտված Համբիկ Սասունյանի գործը կարող է բեկման ենթարկվել: Նրա դատապարտման գլխավոր ապացույցը եղել էր մի ուրիշ կալանավորի՝ Ջեֆրի Մոնս Բուշի վկայությունն այն մասին, թե իբր, Սասունյանը բանտախցում իրեն խոստովանել էր գործած արարքը:

Ջեֆրին այժմ պատրաստվում է դատարանի առաջ խոստովանելու այն մասին, որ ինքը սուտ վկայություն է տվել այն հույսով, որ դա կմեղմի իր պատիժը:

Նախնական հարցաքննման ժամանակ Ջեֆրին Սասունյանի պաշտպան փաստաբաններին խոստովանել է, թե դատավարությունից առաջ ինքը ոչ մի անգամ չի հանդիպել Համբիկին:

Փաստաբաններն այժմ պատրաստվում են Սասունյանի գործը տանել վճռաբեկ ատյան:

Հիշեցնենք, որ Հ. Սասունյանը ցմահ բանտարկության էր դատապարտվել 1984թ., թուրք հյուպատոս Քեմալ Արիկանի սպանության ամբաստանությամբ, եւ այժմ գտնվում է Տեհաչապիի կալանավայրում: ■

Հայ-վրացական միջպետական անդրանիկ պայմանագիրը

Ինքնուրույն պետական քաղաքականության նոր հնարավորություններ

71 տարի անց հարեւան երկու պետություններ... վերագտան իրար: Գաղութացված երկրների ճակատագիրն էր, որ ցարդ ստիպել էր միջպետական սերտագույն կապեր ու նույնիսկ, մի շրջան, միացյալ քաղաքականություն ունեցող երկու երկրներին իրենց պետական բոլոր կապերը պահպանել Մոսկվայի եւ միայն Մոսկվայի միջոցով, նրա տնօրինությամբ եւ արտոնությամբ:

Եւ ահա, հուլիսի 27-ին, Թբիլիսիում, Վրաստանի Հանրապետության նախագահ Զ. Գամսախուրդիան եւ Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն ստորագրեցին մի պայմանագիր, որը հետագայում, Երեւանում վավերացվելուց հետո, կոչված է դառնալու մեծիմաստ մի վկայական, որով մի անգամ եւս սկիզբ է առնելու իսկական բարեկամությունն ու ազատ համագործակցությունը ինքնիշխան երկու երկրների միջեւ:

Այդ պայմանագիրը, փաստորեն, հանդիսանում է նաեւ, որքան էլ տարօրինակ թվա, խաղաղության համաձայնագիր, քանի որ երկու պետությունները 71 տարի առաջ իրարից բաժանվել-խորթացել էին, պատմության մեջ առաջին անգամ պատերազմական իրավիճակում: Եւ երբ ստորագրված պայմանագիրն իր առաջին իսկ կետով նշում է, որ *«կողմերը ճանաչում են միմյանց պետական ինքնիշխանությունը եւ տարածքային ամբողջականությունը, ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը»*, այն վերածվում է խաղաղության դաշնագրի, որը հուսով ենք՝ կմնա անխախտ, ինչ էլ լինեն հայ եւ վրաց ժողովուրդների միջեւ եւ շուրջ տիրող պայմանները:

Այդ պայմանագիրը մի ապտակ է ուղղված կայսերապաշտ Կրեմլին, որ փորձում է համոզել աշխարհին, թե առանց իրեն հատկապես Անդրկովկասը կվերածվի ազգամիջյան արյունահեղությունների թատերաբեմի:

Այդ պայմանագրով վերահաստատվում եւ վերականգնվում է հայ եւ վրաց ժողովուրդների խաղաղ եւ արդյունավետ համակեցությունը՝ արդեն պետական մակարդակով, դժվարությունները միջպետական հարաբերություններով հարթելու գիտակցությամբ, վճռականությամբ:

Լուսանկարը՝ Մարտին ՇԱՀԲԱԶՅԱՆԻ

Պայմանագիր. Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի Հանրապետության միջեւ միջպետական հարաբերությունների հիմնական սկզբունքների մասին

Հայաստանի Հանրապետությունը եւ Վրաստանի Հանրապետությունը, ստորեւ՝ բարձր պայմանավորվող կողմերը, հիմնվելով հայ եւ վրաց ժողովուրդների միջեւ դարավոր ավանդական բարեկամական կապերի վրա, ճանաչելով կողմերից յուրաքանչյուրի պետական անկախության անկապտելի իրավունքը, ձգտելով երկու ինքնիշխան պետությունների միջեւ հարաբերությունները զարգացնել միջազգային իրավունքի չափանիշների հիման վրա, հռչակելով համամարդկային արժեքների, մարդու իրավունքների եւ ազատությունների գերակայությունը, ձգտելով նպաստել տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատմանը, պայմանավորվեցին.

Հոդված 1. Բարձր պայմանավորվող կողմերը ճանաչում են միմյանց պետական ինքնիշխանությունը եւ տարածքային ամբողջականությունը, ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը:

Հոդված 2. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են ծագող բոլոր տարաձայնությունները եւ վիճելի հարցերը կարգավորել բացառապես անմիջական փոխադարձ խորհրդակցությունների եւ բանակցությունների ճանապարհով:

Հոդված 3. Բարձր պայմանավորվող կողմերը միջազգային պրակտիկային համապատասխան հայտարարում են դիվանագիտական ներկայացուցչությունների փոխանակման մասին: Դրանց փոխանակման կարգը եւ ներկայացուցչությունների կարգավիճակը կհստակեցվեն հատուկ համաձայնագրով:

Հոդված 4. Բարձր պայմանավորվող կողմերը փոխադարձ առեւտրատնտեսական հարաբերություններում հռչակում են առավել նպաստավոր ռեժիմ:

Հոդված 5. Բարձր պայմանավորվող կողմերը մտադիր են համակողմանիորեն զարգացնել եւ խորացնել կապերն ու համագործակցությունը գիտության, մշակույթի, առողջապահության, բնության եւ պատմամշակութային հուշարձանների պահպանության ոլորտներում:

Հոդված 6. Բարձր պայմանավորվող կողմերը անհրաժեշտ են համարում առաջիկայում բանակցություններ սկսել երկու պետությունների միջեւ համակողմանի պայմանագրի նախապատրաստման եւ կնքման նպատակով:

Հոդված 7. Սույն պայմանագիրը ենթակա է վավերացման եւ ուժի մեջ է մտնում վավերագրերի փոխանակման օրը:

Վավերագրերի փոխանակումը տեղի կունենա Երեւանում:

Պայմանագիրը ստորագրված է Թբիլիսիում 1991 թ. հուլիսի 27-ին երկու օրինակով՝ հայերեն եւ վրացերեն լեզուներով: Պայմանագրի երկու բնագրերը հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի նախագահ՝
Լեւոն ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վրաստանի Հանրապետության
նախագահ՝
Զվիադ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱ

«Սառը պատերազմից» հետո խորհրդա-ամերիկյան առաջին գագաթաժողովը

Հուլիսի 30-ին, Մոսկվայում սկսվող Մ. Գորբաչովի բանակցությունները Ջ. Բուշի հետ կլինեն «սառը պատերազմի» ավարտից հետո խորհրդա-ամերիկյան առաջին գագաթաժողովը: Դա է նրա գլխավոր եւ հիմնական տարբերությունը բոլոր նախկին խորհրդա-ամերիկյան բարձր մակարդակի հանդիպումներից: Այսպիսի գնահատական տվեց երկուշաբթի, Մոսկվայում կայացած բրիֆինգի ժամանակ ԽՍՀՄ նախագահի մամուլի ծառայության ղեկավար Վիտալի Իգնատենկոն:

Մեր հարաբերություններում *«մենք իսկապես դուրս ենք գալիս համագործակցության մակարդակի»*,– նշեց Վ. Իգնատենկոն: Երկկողմանի բանակցություններն ընդգրկում են շարունակ նոր թեմաներ՝ սպառազինությունների սահմանափակումից մինչեւ շրջանային բախումների կարգավորումը, տնտեսության ասպարեզում համագործակցությունը, ամբողջ մոլորակում անվտանգության պահպանման նպատակներով փոխգործողությունը:

Ջ. Բուշի ԽՍՀՄ կատարած այցի ընթացքում կստորագրվի «իսկապես պատմական» պայմանագիր՝ ստրատեգիական ցամաքային սպառազինման վերաբերյալ: Եւ չնայած այն կարող է ձախից ու աջից քննադատության առարկա դառնալ, խոսքը գնում է դեպի անվտանգ աշխարհի գործնական շարժման ընթացքի «մեկնարկի» մասին, նշեց Վ. Իգնատենկոն:

Նա հաղորդեց, որ Մոսկվայում կստորագրվեն մի շարք պայմանագրեր, որոնք վկայակոչված են բարձրացնել երկու երկրների միջեւ համագործակցությունը՝ որակապես նոր մակարդակի: Ուշադրություն կդարձվի, որպեսզի Լոնդոնում սկսված գործընթացը շարունակվի:

Հավանական շրջանային թեմաների մեջ Վ. Իգնատենկոն նշեց Մերձավոր Արեւելքը, ետպատերազմական վիճակը Պարսից ծոցում, Աֆղանստանը, Հարավսլավիան, Կիպրոսը, Կուբան, Կորեական թերակղզին:

Օգոստոսի 1-ին ԱՄՆ-ի նախագահը կմեկնի Կիեւ, ուր կհանդիպի հանրապետության ղեկավարների հետ: Մոսկվայում կկայանան նրա հանդիպումները Ռուսաստանի եւ Ղազախստանի նախագահների հետ:

Պատասխանելով թղթակիցների հարցերին Վ. Իգնատենկոն ասաց, որ ծրագրով նախատեսված չեն շփումներ մյուս հանրապետությունների ղեկավարների հետ, այդ թվում եւ Մերձբալթյան:

Մյուս կողմից, ինչպես հայտնի դարձավ «ԻՖ»-ի թղթակցին Ռուսաստանի ղեկավարության մոտ աղբյուրներից, երկուշաբթի օրը տեղի ունեցավ հանդիպում ԽՍՀՄ նախագահ Գորբաչովի եւ ՌՍՖՍՀ նախագահ Բորիս Ելցինի միջեւ: Հանդիպումը սկսվել է մոտավորապես ժամը 20-ին եւ վերջացել հուլիսի 30-ի առավոտյան ժամը 3-ին: Քննարկվել են Միութենական պայմանագրի մնացած՝ չկարգավորված հարցերը եւ կենտրոնի ու հանրապետության փոխհարաբերությունների մի քանի այլ խնդիրներ: Այդ աղբյուրների համաձայն, ԽՍՀՄ նախագահն ընդունել է Ռուսաստանի ղեկավարության առաջարկությունը՝ հաստատել վարկերի փոխանցման միաստիճանի համակարգ այնպես, որ հանրապետությունը կենտրոնին փոխանցի իր եկամտի արձանագրված տոկոսը: Այսպիսով, Ռուսաստանն այլեւս Միութենական պայմանագրի ստորագրման հետ կապված ոչ մի խնդիր չի ունենա:

Երեկ, ՌՍՖՍՀ արտաքին գործերի նախարար Անդրեյ Կոզիրեւը պատասխանելով «ԻՖ»-ի հարցին, թե ինչու Բ. Ելցինը չկար երկուշաբթի օրը Կրեմլում կայացած խորհրդա-ամերիկյան բանակցությունների պատվիրակության կազմում, հայտարարեց. *«Այսօր Ելցինը ինքնուրույն հանդիպում կունենա ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի հետ Կրեմլում, ժամը 16-ին»:* ■

Հայաստանի կառավարության անդամները Կիրովականում

Կիրովականում տեղի ունեցավ ՀՀ կառավարության արտագնա խորհրդակցություն՝ նվիրված երկրաշարժի հետեւանքների վերացմանը: Այն վարում էր հանրապետության վարչապետ Վ. Մանուկյանը: Շինարարության նախարար Գ. Մարտիրոսյանը մասնավորապես նշեց, որ երկրաշարժից հետո քաղաքում շահագործման է հանձնվել 20 հազար 345 քմ օգտակար մակերեսով 2818 բնակարան, որը վերահանձնվելիք 810 հազար քմ-ի 25,2 տոկոսն է կազմում:

Հրատապ հարցերի մասին խոսակցություն ծավալեցին վարչապետի առաջին տեղակալ Ռ. Չիֆթալարյանը, ֆինանսների նախարար Ջ. Ջանոյանը, նրա տեղակալ Ն. Ասմարյանը եւ այլք: Առաջարկների մեծ մասը գործնական էին, հեռու միտինգային տրամադրվածությունից: Խորհրդակցությունից հետո կառավարության անդամները եղան Տարոն նորակառույց թաղամասում, ծանոթանալու շինարարության ընթացքին:

Սեփ. թղթ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ

Մադագասկարի նախագահ Ռացիրական երեկ հայտարարեց, թե որոշել է լուծարել երկրի խորհրդարանը եւ հանրաքվեով որդեգրել մի նոր սահմանադրություն: Նա կոչ արեց ընդդիմադիրներին, որոնք պահանջում են իր հրաժարումը 16 տարի տեւած իշխանությունից հետո, որ վերջ տան 7 շաբաթ շարունակվող իրենց արշավին:

Կանադան վերացրեց այն օրենքը, որն արգելում էր ծխախոտի գովազդը երկրի զանգվածային տեղեկատվության միջոցներով, այն համարելով հակասահմանադրական, քանի որ զրկում է ազատ խոսքի իրավունքից: 148 էջանոց դատական գործում դատավորը 3 տարի առաջ ընդունված այդ օրենքը ներկայացրեց որպես «պետական բարոյականության արտահայտություն»:

Քննական այցով լինելով Չինաստանի քաղաքներից Պեկինում, Շանհայում եւ Լհասայում, մարդու իրավունքների միջազգային հանձնախմբերից մեկը, որի պարտականությունն էր ստուգել երկրում մարդու իրավունքների վիճակը դեմոկրատական շարժման ճնշումից 2 տարի հետո, հայտարարեց, թե մտահոգիչ փաստեր է հավաքել:

Հարավսլավիայի կառավարությունը երեկ Բրյուսելում հանդիպեց եւրոպական համայնքի երկրների արտգործնախարարներին, խնդրելով նրանց առավել ազդու միջամտությունը երկրում ընդհարումները դադարեցնելու գործում: Համայնքի երկրների նախարարները համաձայն գտնվեցին իրենց 50 անզեն դիտորդների մանդատը տարածել Սլովենիայից նաեւ Խորվաթիայի վրա, հսկելու համար ազգամիջյան բախումները:

Իրաքն սկսում է առաջիկա շաբաթվանից Քուվեյթին վերադարձնել այդ երկրից իր կողոպտած միլիարդավոր դոլլարների արժողությամբ [illegible] ոսկին:

Ռեպորտաժ Վրաստանից

ԱՌԱՋԻՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կարճատև պաշտոնական այցը Թբիլիսի լուսաբանելու նպատակով, հուլիսի 27-ին Հայաստանից Վրաստան ուղևորվեցին մի խումբ լրագրողներ:

Ժամը 13:45 է: Թբիլիսիի օդանավակայանում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատվիրակությանը դիմավորում են Վրաստանի Հանրապետության նախագահ պրն. Զվիադ Գամսախուրդիան, խորհրդարանի նախագահ պրն. Ասաթիանին, պաշտոնական այլ անձինք:

Նրանց հետ էին նաև այցի նախօրեին Թբիլիսի ժամանած Հայաստանի պատվիրակության անդամներ, պատգամավոր Շ. Քոչարյանը և խորհրդարանի մամուլի ծառայության ղեկավար Ա. Անտինյանը: Մենք՝ լրագրողներս, «սլացանք» դեպի ինքնաթիռը, պատրաստվելով տեսագրել, լուսանկարել, ձայնագրել: Չէ՞ որ սա երկար սպասված հանդիպում էր, որի արդյունքում պիտի ստորագրվեր Հայաստանի առաջին միջպետական պայմանագիրը:

Մերսեդեսների շքախումբը մոտոցիկլիստների ուղեկցությամբ ուղղություն վերցրեց դեպի Վրաստանի նախագահի ռեզիդենցիան:

Ճանապարհի երկու կողմերում կանգնած բազմաթիվ թբիլիսցիներ ողջունում էին հյուրերին:

Լուսանկարը՝ Մարտին ՇԱՀԲԱԶՅԱՆԻ

Ամեն ինչ շատ բնական էր, ջերմ և ինքնաբուխ, ուրեմն և՝ իսկապես հուզիչ: Հյուրանոցում կարճատև հանգստի ժամանակ զրուցում էինք պատվիրակության անդամներ Շավարշ Քոչարյանի, Աշոտ Եղիազարյանի, Շահեն Կարամանուկյանի հետ:

Հիմնական հարցը հանգում էր հետևյալին. հայ-վրացական հարաբերություններում պետք չէ պատրանքներ ունենալ, թե խնդիրները կլուծվեն ինքնըստինքյան, առանց քաղաքական և դիվանագիտական լուրջ քայլերի: Ակնհայտ է, որ սերտ համագործակցությունն անխուսափելիորեն պիտի կայանա, որովհետև այլ կերպ լինել չի կարող, այլ կերպ երբեք չի եղել...

Ժամը 15:30 է: Վրաստանի Հանրապետության Գերագույն խորհրդում սկսվում են Հայաստանի պատվիրակության և Վրաստանի իշխանությունների միջև բանակցությունները, որից հետո երկու հանրապետությունների ղեկավարներն ունեցան կեսժամյա առանձնազրույց:

Ժամը 16:30 է: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և Վրաստանի Հանրապետության նախագահ Զվիադ Գամսախուրդիան ստորագրում են «Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև միջպետական հարաբերությունների հիմնական սկզբունքների մասին»:

Ծափահարություններ, շնորհավորանքներ: Կողքիս կանգնած վրացի լրագրողներից մեկն ասաց հայերենով. «Շնորհավոր, ախպեր»: Պարզվեց, որ այստեղ շատերն են հայերեն հասկանում, նույնիսկ, ինչպես, օրինակ, վրաց նախագահի խորհրդական, մասնագիտությամբ հայագետ Խաթիա Ջինջիխաձեն, կանոնավորապես տիրապետում են հայերենին, կարդում հայկական թերթեր:

Պայմանագրի ստորագրումից հետո կայա- ած երկու ղեկավարների մամլո ասուլիսում . Տեր-Պետրոսյանն ասաց, թե խորապես որհրդանշական է և ոչ պատահական, որ այաստանը, որպես անկախ հանրապետու- ունն իր առաջին պայմանագիրը կնքում է աստանի հետ: Պայմանագիրը բխում է ոչ այն Հայաստանի և Վրաստանի, որպես տությունների, շահերից, այլ նաև Վրաս- նում ապրող կես միլիոն հայերի ազգա- , քաղաքացիական շահերից և հոգսերից: նուհետև, շարունակելով իր խոսքը, Լևոն Տեր-Պետրոսյանն ասաց, թե վստահ է, որ վրացական պետությունը գործով կապացուցի իր հոգատարությունը մեր հայրենակիցների նկատմամբ:

Պատասխանելով «Կուրանտի» թերթի թղթակցի հարցին, Նովո-Օգարյովո կատարած իր այցի վերաբերյալ, նախագահն ասաց, որ ինքը երբեք չի հրաժարվել մասնակցել Ֆեդերացիայի խորհրդի նիստերին, երբեք չի գնացել արհեստական առճակատման ինչպես կենտրոնի, այնպես էլ այլ հանրապետությունների հետ, թեև Հայաստանի ժողովուրդը և կառավարությունը հաստատապես բռնել են անկախության ուղին:

Ինչպես հայտնի է, վերջերս ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը դիմեց 6 հանրապետություններին, որոնք ցանկություն էին հայտնել ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու մասին, գտնել որևէ ընդունելի ձևեր, տարբերակներ կենտրոնի և այլ հանրապետությունների հետ ավանդական դարձած փոխհարաբերությունների պահպանման համար: Լևոն Տեր-Պետրոսյանը նշեց, որ անկախությունը մեկ րոպեի գործ չէ, այլ երկարատև գործընթաց: Նկատի առնելով, որ Հայաստանը բռնել է անկախության ուղին՝ ԽՍՀՄ գործող օրենքների շրջանակներում, որը նախատեսում է 5 տարվա անցումային ժամկետ՝ պետք է գտնել ամենաօպտիմալ ճանապարհները և տարբերակները այդ ժամանակամիջոցը լավագույնս օգտագործելու համար: 5 տարին այն ժամանակամիջոցն է, որի ընթացքում վերջնականապես կհստակեցվեն փոխհարաբերությունները թե կենտրոնի և թե հանրապետությունների հետ: Նախագահը նշեց, որ նույնիսկ չեն բացառվում այնպիսի տարբերակներ, ինչպես ասենք՝ ապագա միության ընկերակից-անդամ լինելը, կամ Միութենական պայմանագրի ստորագրելը՝ անցումային ժամկետին համապատասխան: Այդ տարբերակները դեռևս քննարկվում են: Թե ո՞րը կլինի վերջնական, հնարավոր չէ առայժմ ասել: Հայաստանի վերաբերմունքը ապագա Միության նկատմամբ պարզ կդառնա միմիայն սեպտեմբերի 21-ի հանրաքվեից հետո:

Պատասխանելով նույն թղթակցի հարցին, Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիան ասաց. *«Մեր հարաբերությունները Հայաստանի հետ միշտ ջերմ են եղել, մենք բախումներ չենք ունեցել, եթե կան ինչ-որ թյուրիմացություններ, ապա այդ հարցերը կարգի կբերվեն, և դա կնպաստի մեր կառավարությունների միջև մի նոր պայմանագիր կնքելուն: Մենք կստորագրենք նաև տնտեսական համաձայնագիր, և ես համոզված եմ, որ մեր երկու պետությունների բարեկամությունը կխորանա»:*

«Ազգ»-ի հարցին, թե *«Ի՞նչ կասեիք վիրահայության մշակութային ինքնավարության տալու մասին»*, Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիան պատասխանեց.

«Վրաստանի հայ ազգաբնակչությունը, ինչպես նաև մեր երկրում ապրող այլ ազգերը ունեն մշակութային ինքնավարություն և այն ավելի պիտի խորանա և օրենքի ձև ստանա: Վրաստանում ապրող ոչ մի հայ չի կարող ասել, թե ինքը չի կարող խոսել հայերեն, թե չունի թերթ, դպրոց, թատրոն: Վրաստանում են ապրում և գործում հայ մտավորականներ, գրողներ և եթե կան ինչ-ինչ խնդիրներ, ապա մենք հավատում ենք, որ դրանք կլուծվեն»:

«Ազգ»-ի այն հարցին, թե կենտրոնի կողմից անկախության ուղին բռնած հանրապետությունների նկատմամբ աճող ճնշման պայմաններում դրան դիմակայելու համար հնարավո՞ր են արդյոք համատեղ քայլեր, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահը պատասխանեց.

«Ես կարծում եմ, որ մեծարգո նախագահի վերջին նախաձեռնություններն այս ուղղությամբ կարևոր նշանակություն ունեն, նկատի ունեմ Ադրբեջանի հետ կնքված պայմանագիրը, դրանով մենք փաստորեն ապացուցում ենք, որ Կովկասում նույնպես տեղի են ունենում փոխհամաձայնեցված գործողություններ, մի բան, որ մինչև հիմա, մեր անկախության գործընթացում պակասում էր, իսկ վաղուց արդեն իրականություն է Մերձբալթյան հանրապետություններում: Նրանք առաջին օրվանից իրենց անկախության պայքարը տարան փոխհամաձայնեցված՝ երեք հանրապետությունների միջև: Բայց վստահ չեմ, թե մեզ մոտ ևս գործերն այնպես հարթ կընթանան, ինչպես Մերձբալթիկայում: Մենք ունենք դեռ տաք կոնֆլիկտներ, նկատի ունեմ առաջին հերթին ղարաբաղյան հարցը, որի լուծումից է կախված ընդհանրապես մեր ապագա համագործակցությունը երեք հանրապետությունների միջև, առաջին հերթին Հայաստանի և Ադրբեջանի միջև: Պետք է նշեմ, որ վերջին շրջանում կարծես թե նկատվում է դրական տեղաշարժ Արցախի հարցի լուծման ճանապարհին: Արցախի աշխատավորությունը, որ նաև աջակցություն է գտել Հայաստանի կողմից, պատրաստակամություն է հայտնել բանակցությունների մեջ մտնել ադրբեջանական իշխանությունների հետ և խաղաղ քաղաքական բանակցությունների միջոցով լուծել այդ հարցը: Եվ այս հարցի կարգավորման դեպքում, որտեղ, ես կարծում եմ, Վրաստանն էլ կարող է որոշակի դեր խաղալ, արդեն երեք հանրապետությունների համագործակցությունը չափազանց ռեալ կարող է դառնալ: Մանավանդ, վաղ թե ուշ Ադրբեջանն էլ, նույնիսկ առկա ռեժիմի պայմաններում, բռնելու է անկախության ուղին»:

Պատասխանելով *«Սվոբոդնայա Գրուզիա»* թերթի թղթակցի հարցերին, թե Ախալքալաքում զինված խմբեր կա՞ն արդյոք և թե Հայաստանն ունի՞ տարածքային հավակնություններ, Տեր-Պետրոսյանն ասաց, թե իրեն հայտնի չէ, որ վրացահայության մեջ կան զինված խմբեր: Այնուհետև, օգտվելով տրված հարցի ընձեռած հնարավորությունից, Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահը հրապարակեց Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը՝ վրացահայության վերաբերյալ. *«Վրաստանում բնակվող հայերը Վրաստանի լիարժեք իրավահավասար քաղաքացիներ են, որոնք պետք է իրենց լուման ներդնեն Վրաստանի պետության կերտման գործում, ապրեն Վրաստանի և վրաց ժողովրդի շահերով ու հոգսերով: Վրաստանի հայությունը չունի որևէ ազգային կամ քաղաքական պրոբլեմ, բայց վրացահայությունը, ինչպես նաև Վրաստանի բոլոր քաղաքացիներն ունեն սոցիալական, քաղաքացիական իրավունքներին վերաբերող խնդիրներ, նման պրոբլեմներ կան նաև Ախալքալաքում և Վրաստանի այլ հայաբնակ վայրերում, և ես համոզված եմ, որ այդ պրոբլեմները պետք է լուծվեն Վրաստանի օրենքների և սահմանադրության շրջանակներում՝ վրաց իշխանությունների և հայազգի քաղաքացիների միջև բանակցությունների, փոխզիջումների միջոցով»:*

Լ. Տեր-Պետրոսյանն ընդգծեց, որ փոխադարձ վստահության դեպքում չեն կարող լինել այնպիսի խնդիրներ, որոնք չլուծվեն խաղաղ, հանգիստ ճանապարհով, իսկ փոխադարձ վստահությունը կողմերը կարող են ապացուցել գործով: Շարունակելով պատասխանել թղթակիցների հարցերին, ԳԽ նախագահը հայտնեց, որ Հայաստանն ազատ, ժողովրդավար հանրապետություն է, որտեղ ապահովված է խոսքի, մամուլի, քաղաքական կուսակցությունների լիակատար ազատություն: Յուրաքանչյուր անհատ, ինչպես նաև ցանկացած քաղաքական հոսանք, կազմակերպություն, կուսակցություն հնարավորություն ունի արտահայտել իր տեսակետը, որքան էլ դա հաճելի չլինի ներկա իշխանություններին: Կան ուժեր, որոնք դեմ են Հայաստանի անկախությանը, կան նաև այնպիսիք, որոնք խոսքով կողմ են, բայց իրականում անում են ամեն ինչ, որ Հայաստանը ստորագրի Միութենական պայմանագիրը: Սակայն հասարակական կարծիքի ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ այդ ուժերն ամենևին չեն կարող ազդել սեպտեմբերի 21-ի հանրաքվեի արդյունքների վրա: Լ. Տեր-Պետրոսյանը հայտնեց, թե վստահ է, որ հայ ժողովրդի «ջախջախիչ» մեծամասնությունը սեպտեմբերի 21-ին կքվեարկի անկախության օգտին:

Մամլո ասուլիսից հետո, որը տևեց մոտ 45 րոպե, Վրաստանի Հանրապետության նախագահ Զ. Գամսախուրդիան ճաշկերույթ տվեց ի պատիվ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի:

...Ժամը 20:30 է: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և նրան ուղեկցող պաշտոնական անձինք հրաժեշտի ջերմ խոսքեր են փոխանակում նախագահ Գամսախուրդիայի և վրացական կողմի մյուս ներկայացուցիչների հետ:

«Մեզ՝ վրացիներիս համար, Լևոն Տեր-Պետրոսյանը հայ ժողովրդի խաղաղասեր, հավասարակշիռ և իմաստուն ոգու մարմնացումն է», ասաց Զվիադ Գամսախուրդիան:

Պայմանագրի գնահատականները քաղաքագետների կողմից դեռ կտրվեն, սակայն արդեն այսօր պարզ է, որ այն դարձավ կարևոր իրադարձություն հայ-վրացական հարաբերությունների մեջ: Եվ տա Աստված, որ այն դառնա խթան մեր հարաբերություններում ցանկացած հարց բարեկամաբար լուծելու համար:

Երբ ինքնաթիռով վերադառնում էինք Երևան, օգտվելով առիթից, դիմեցի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին. «Բավարարվա՞ծ եք, պրն. նախագահ, այցի արդյունքներով»:

«Ես կարծում եմ, ասաց Լևոն Տեր-Պետրոսյանը, *որ այս բանակցությունների և այս պայմանագրի ժողովուրդը վաղուց էր սպասում և այդ առումով ես միանգամայն բավարարված եմ, որ կատարվեց մեր ժողովրդի ցանկությունը, որովհետև այն անորոշ վիճակը, որում գտնվում է Հայաստանի Հանրապետությունը, մեր ժողովրդին որոշ չափով շփոթության մեջ է գցել, կա որոշակի անվստահություն ապագայի նկատմամբ, մենք պետք է ապացուցենք, որ փոխելով մեր կարգավիճակը Խորհրդային Միությունում, կարող ենք գտնել ելք դեպի արտաքին աշխարհ, նոր հարաբերություններ հաստատել ինչպես մեր հարևանների, այնպես էլ Խորհրդային Միության մյուս հանրապետությունների հետ և սա սկիզբն է: Արդեն պատրաստ է Լիտվայի Հանրապետության հետ կնքվելիք պայմանագիրը, որը նախնական պայմանավորվածությամբ կկնքվի օգոստոսի սկզբին: Պատրաստ է նաև Ռուսաստանի հետ կնքվելիք պայմանագիրը: Դրա ստորագրման մեջ շահագրգռված է անձամբ նախագահ Ելցինը, որի հետ վերջերս մշտական կապ ենք պահպանում և անձնական հանդիպումներով, և հեռախոսով, մասնավորապես, վերջին երկու օրը ես ունեցել եմ լուրջ հեռախոսազրույցներ Ելցինի հետ և վստահ եմ այս գործընթացը առաջ կգնա»:*

Գուրգեն ԽԱՆՋՅԱՆ
Թբիլիսի-Երևան

Հասարակական հսկողություն իրավապահպան մարմինների վրա

«Օգոստոսի 23, Ազգային դաշինք» միությունը, *«Հայաստանի Հանրապետություն»* օրաթերթը, Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և վերջերս նրանց միացած *«Ազգ»* եռօրյան ամեն ամսվա վերջին շաբաթ կամ կիրակի օրերին, Կամերային երաժշտության տանը կազմակերպում են *«Անմիջական կապ»* կոչվող՝ մարդու իրավունքներին և օրինական շահերի պաշտպանությանը նվիրված հանդիպում: Այդ «Անմիջական կապ»-ին հասցեագրված գանգատներն ու դիմումները անմիջապես ուսումնասիրվում և ուղարկվում են համապատասխան իրավապահ մարմիններին, որոնք «Օգոստոսի 23, Ազգային դաշինք» միության անդամ իրավաբանների կամ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ներկայացուցիչների հետ միասին ուսումնասիրում են դրանք: Հարցը համատեղ եզրակացությամբ, առանց ավելորդ քաշքշուկի՝ շատ արագ լուծում է ստանում: Անհրաժեշտության դեպքում տվյալ հարցը հրապարակման նյութ են դարձնում «Անմիջական կապին» միացած թերթերը:

Բնական է, որ նախկինում, երբ գանգատները կամ դիմումները միանձնյա էին լուծվում՝ դատախազի, դատավորի կամ որևէ պաշտոնյայի կողմից՝ զանազան միջնորդությունների կամ այլ ազդեցությունների շնորհիվ միշտ չէ, որ հարցը օրենքի սահմաններում և օրենքի անունից էր լուծվում:

Հուլիսի 28-ին, Կամերային երաժշտության տանը, «Անմիջական կապի» հերթական հավաքն էր: Ստացված դիմումների կապակցությամբ հրավիրվել էին և ներկաներին հետաքրքրող հարցերին պատասխանեցին մի քանի կազմակերպությունների ներկայացուցիչներ: ՀՀ առևտրի նախարարության ժողովրդական սպառման ապրանքների որակի և առևտրի պետական տեսչության պետ Աշոտ Բաբաջանյանը խոսեց շուկայական տնտեսության անցման շրջանում գների կարգավորման և առևտրի հետ կապված այլ հարցերի մասին: Արտասահմանից ներմուծվող ապրանքների վրա սահմանված մաքսերի վերաբերյալ նոր օրենքը մեկնաբանեցին ՀՀ մաքսատան ուղևորների բաժնի պետ Կիմ Ավետիսյանն ու բեռնային բաժնի պետի տեղակալ Արամ Ղազարյանը:

Վերջում հրապարակվեցին նախկին հանդիպումների ժամանակ ստացված դիմումների, գանգատների քննարկման արդյունքները: Բազմաթիվ էին նոր դիմումները: «Անմիջական կապը» շարունակում է գործել:

Սեփ. թղթ.

Երեւանում հիմնվել է ամերիկյան համալսարան

Հայկական բարեգործական ընդհանուր միության եւ ՀՀ բարձրագույն կրթության եւ գիտության պետական կոմիտեի նախաձեռնությամբ Հայաստանում հիմնվել է Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ)՝ Կալիֆոռնիայի համալսարանի ակադեմիական հովանավորության տակ: Այն իր առաջին ուսանողները կունենա սեպտեմբերի 23-ին: Համալսարանում դասավանդելու են Կալիֆոռնիայի համալսարանի դասախոսները: ՀԱՀ-ի առանձնությունն է տալ ամերիկյան կրթական համակարգի եւ մակարդակի համապատասխան կրթություն Հայաստանի եւ այլ երկրների ուսանողներին: Ուսումնական ծրագրերը մշակվել են Կալիֆոռնիայի համալսարանի հսկողությամբ, ՀԱՀ-ի ներկա ներկայացուցչության միջոցով: Համալսարանն իր շրջանավարտներին կտա այնպիսի գիտելիքներ, որոնք կխթանեն Հայաստանի հասարակական եւ տնտեսական զարգացումը: Այն սկզբում կտա առաջատար գիտելիքներ ճարտարագիտության (Engineering) եւ գործարար ղեկավարում (Business Management) մասնագիտություններով: Ճարտարագիտության մագիստրոսի աստիճանը կշնորհվի սեյսմակայուն ճարտարագիտության եւ արդյունաբերական ճարտարագիտության բնագավառներում: Գործարար ղեկավարման մագիստրոսի աստիճանը կշնորհվի աշխատուժի ղեկավարման եւ միջազգային գործարարության բնագավառներում (Ֆինանսներ եւ մարքեթինգ): Մեկ տարվա ուսումը բաժանվում է երեք կիսամյակի: Շրջանավարտներից ոմանք իրենց ուսումը շարունակելու են ԱՄՆ-ում: Ծրագրով ուսանողների թիվը կազմելու է 200-300 հոգի: Հետագա տարիների ընթացքում նախատեսվում են նաեւ այլ ծրագրեր, եւ մտադրություն կա ստեղծել ընդհանուր բարձրագույն կրթության ծրագիր: Դիմորդները պետք է տիրապետեն անգլերենին, քանի որ ուսուցումը կտարվի անգլերենով: Համալսարան ընդունվողները պետք է ունենան բարձրագույն կրթություն՝ համապատասխան բնագավառում: Օրինակ՝ (MBA) ծրագրի համար դիմորդը պետք է ունենա մաթեմատիկական, տնտեսագիտական կամ որեւէ ճարտարագիտական մասնագիտություն: Enginering եւ արդյունաբերական ճարտարագիտության ծրագրի համար դիմորդը պետք է ունենա կրթություն՝ քաղաքաշինության, էլեկտրականության, արդյունաբերության կամ մեխանիկայի ճարտարագիտության ճյուղերում: Ժամանակավորապես Հայաստանի ամերիկյան համալսարանն իր դասերը կանցկացնի Բաղրամյան 40-ում («Շահումյան» պալատ), իսկ հետագայում այն Երեւանից դուրս կունենա իր շենքը՝ ամերիկյան համալսարանների համալիրով: Ուսման վարձը տարեկան 12 հազար ռուբլի է, իսկ լավ սովորողները կրթաթոշակ կստանան: Շատ կարեւոր է համակարգիչներին ծանոթ լինելը: Առաջին կիսամյակում նախատեսվում են անգլերեն լեզվի եւ համակարգիչների լրիվ դասընթացներ: Վերջնական ընդունելությունը կարվի հիմնական մասնագիտական գիտելիքների քննություններից հետո:

Մարգրետ ՔԱՄԱՑՅԱՆ, ՀԱՀ-ի ժամանակավոր գրասենյակի վարիչ

Մեր նպատակն է պատրաստել նոր մասնագետներ տնտեսության, աղետի գոտու եւ առեւտրի ասպարեզում աշխատելու համար: Առաջին դժվարությունը երկու սիստեմների հաշտեցման մեջ է: Տարբերություն կա նաեւ ծրագրերի մեջ, որոշ առարկաներ մեզ պարզապես չեն հետաքրքրում: Արդեն, կարելի է ասել, որ բավականին հետաքրքրվողներ եղել են, սակայն միայն գործերը ներկայացնելը բավականին բարդ պրոցես է, ուստի շատերը չեն հասցրել գործերը ներկայացնել: Դժվարություններից է նաեւ դասախոսների ժամանման հարցը, սակայն հուսով ենք, որ այս բոլոր խնդիրները ժամանակի ընթացքում կլուծվեն:

Սեփ. թղթակից

Ազատութեան չարաշահութիւնը

Թատերաբեմը՝ Գեղարդավանքին սրբազան եկեղեցիին խորանն է:

Դերակատարը՝ նախագահն է *«Ռուս-ամերիկեան Քրիստոնէական ընկերակցութիւն»* անունով կազմակերպութեան մը:

Հանդիսականները՝ փոքրաթիւ հայ հաւատացեալներ:

Խորանին վրայ զետեղուած են խնձոր, մոմեր ու ծաղիկներ:

Ջինս հագած երիտասարդ օտարական նախագահը արտառոց երգերով քրիստոնէութիւն կը քարոզէ: Եւ ո՞ւր: Հայ ժողովուրդի ամենէն նուիրական սրբատեղիներէն մէկուն մէջ:

Արդարեւ, Գեղարդավանքը կամ Այրիվանքը միջնադարեան սրբազան կառոյց է, ժայռափոր տաճարներով, սքանչելի զարդաքանդակներով ու չնաշխարհիկ խաչքարերով. մեր պատմութեան ամենէն բախտորոշ մէկ շրջանին, Զաքարեաններու եւ Պռոշեաններու շինարարական արուեստին հոյակապ մէկ կոթողը, որ ԺԳ. դարէն սկսեալ մեր հոգեւոր եւ մշակութային կարեւոր կեդրոններէն մէկը եղած է իր դպրոցով, գրչատունով եւ գրադարանով: Մինչեւ այսօր ան կը հանդիսանայ ուխտագնացութեան ամենէն աւելի յաճախուած վայրը Հայաստանի մէջ, որպէս անառիկ ամրոց քրիստոնէական մեր հաւատքին:

Սա այսպիսի սրբատեղի մըն է, զոր կը յանդգնի սրբապղծել ներս սողոսկած վտանգաւոր դերակատար մը:

Գիտէինք թէ, օգտուելով այսօր Հայաստանի մէջ տիրող այլ ազատութիւններու կարգին նաեւ կրօնի ազատութենէն, հոն խուժած են զանազան, յաճախ անգոյն ու անդիմագիծ աղանդներու փերեզակներ՝ Հայաստան փոխադրելով այլանդակ բարքեր ու ապականութիւն: Վտանգաւոր այս երեւոյթին անդրադարձաւ մեր մամուլը ժամանակին, դատապարտելով զայն բուռն կերպով:

Բացորոշ, ցաւալի իրողութիւն է, թէ այս ինքնակոչ քարոզիչներուն ներկայութիւնը եւ գործունէութիւնը աւելի կը բարդացնեն արդէն իսկ ծանր դժուարութիւններու ենթակայ տագնապահար մեր հայրենիքին մտահոգութիւնները:

Մենք պէտք չունինք օտար քարոզիչներու:

Հայրենի մեր ժողովուրդը քրիստոնէական իր հաւատքը պահեց նոյնիսկ համայնավարական վարչակարգի կապանքներուն ու հալածումներուն հակառակ: Պահեց՝ յաճախ գաղտնօրէն աղօթելով Հայոց Աստուծոյն:

Մենք, որ եղած ենք քրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակող առաջին ժողովուրդը աշխարհի, ամրօրէն փարած ենք քրիստոնէութեան: Ինչպէս ամէն բանի, նոյնպէս կրօնասիրութեան մէջ հասնելով մոլեռանդութեան աստիճանին, որովհետեւ Դերենիկ Դեմիրճեանի գնահատումով չափազանցն է հայուն չափանիշը:

Կը թուի, թէ անդէմ աղանդներու դիմակաւոր քարոզիչներ դժբախտաբար սկսած են որսալ հայ հաւատացեալներ, այսօր հաւանաբար քիչ թիւով, սակայն ո՞վ կրնայ երաշխաւորել, թէ վաղը մեր բարեմիտ ժողովուրդը աւելի մեծ թիւով պիտի չհետեւի անոնց, որոնք հնարամիտ խաբէութիւններով կը ջանան մոլորեցնել մեր հաւատացեալ բարի ժողովուրդը, այս [illegible] նման, որ *«Ռուս-ամերիկեան Քրիստոնէական ընկերակցութեան»* նախագահի շապիկ հագած, սկսած է հիւանդներ բժշկել որպէս «բժիշկ մեսիա»:

Այս մարդուկը եւ իր նմանները թող երթան քրիստոնէութիւն քարոզեն, անհաւատներ փրկեն, հիւանդներ բժշկեն իրենց լայնածաւալ երկիրներու բազմամիլիոն ժողովուրդներուն մէջ: Մենք կարիքը չունինք փրկուելու: Ուրկէ՞ն, որո՞նց կողմէ առաքուած է այս գայլը եւ ուրիշ գայլեր՝ մեր փոքր հօտին մէջ ազատօրէն չարաշահելու մեր ժողովուրդին նոր ձեռք բերած ազատութիւնը:

Ի պաշտպանութիւն մեր բարեպաշտ ժողովուրդին, անհրաժեշտ է, որ սահմանափակուին նման ազատութիւններ:

Կարեւոր է նաեւ, որ Հայ Եկեղեցին ջանայ բազմապատկել զարգացած, գիտակից ու նուիրեալ եկեղեցականներու թիւը, առաջքը առնելու համար ապերասան փրկիչներու՝ գոհացում տալով մեր ժողովուրդին կրօնական կարիքներուն, դաստիարակելով զայն ու անոր ուսուցանելով մեր եկեղեցւոյ պատմութիւնը եւ դերը:

Հայաստանի սահմաններէն դուրս պէտք է շպրտուին այլասերիչ ու պառակտիչ բոլոր աղանդներու քարոզիչները, որոնք եկած են չարաշահելու մեր երկրին ազատութիւնը՝ ուրո՞ւն եւ որո՞նց հաշւոյն, Աստուած գիտէ:

Օրուանդ ՊԱՊԱՑԵԱՆ

Ստեղծագործելն ինձ համար կամավոր աքսոր է դեպի տիեզերք

Վահ-Անը (Վահան Վազգենի Անանյան) ծնվել է հունիսի 22-ից 29-ը, 1959-ին, Երեւանում: «Արդեն մանկությունից, ծննդական ջերմության հետ մեկտեղ, ես ընկալեցի գեղեցկությունը: Հիասքանչված իրականությունից, ես հրաժարվեցի հետագա ուսումից: Ուսումնառել եմ քանդակագործություն հայ քանդակագործ Սերգեյ Ստեփանյանի մոտ: 17-ից 20 տարեկան հասակում Երեւանում մասնակցել եմ երիտասարդ արվեստագետների ցուցահանդեսներին՝ ներկայացնելով նկարներս: 1979-ից մինչեւ 1984-ը ես ապրել եւ ճանապարհորդել եմ տարերում: Սովորել եմ նկարել եւ մասնակցել եմ ԽՍՀՄ-ի եւ արտասահմանի տարբեր քաղաքների ցուցահանդեսների: Իմ աշխատանքներից կան նաեւ անձնական հավաքածուներում, ԽՍՀՄ-ում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Ֆինլանդիայում, Շվեդիայում, Գերմանիայում, Հունգարիայում, Ավստրիայում, Ճապոնիայում: Ես սիրում եմ մարդկանց, որոնք ինձ մոտ են եւ կրեմը պատրաստում են մրգերով: Չեմ սիրում բյուրոկրատներին եւ ամբաստանողներին:

«Իմ երազներում ես ինձ հաճախ տեսնում եմ տարբեր համերգներում: Մի համերգի ժամանակ սկսվել էր երաժշտությունը, բայց վարագույրները չէին բացվում: Նվագախումբը զինվորական վալսեր էր նվագում: Դահլիճը լցնում էր կանաչ հագուստ հագած մարդկանցով. բոլորն ուտում էին թթու դրած վարունգ եւ երբ վերջացրին ուտելը, համերգը նույնպես վերջացավ, բայց վարագույրները այդպես էլ չբացվեցին: Դրանից հետո բոլորը գնացին եւ ես շատ էի ուզում տեսնել, թե ինչ կա վարագույրների ետեւում: Այնտեղ այգի էր, ուր աճում էին վարունգներ: Մեջտեղում դրված էր մահճակալ, որի մեջ քնած մարդ կար եւ խռմփացնում էր: Խռմփոցը այնքան ուժեղ էր, որ ցանկացա տեսնել, թե ով է նա: Ես մոտեցա, բարձրացրի վերմակը եւ տեսա... ինքս ինձ»:





Ես անչափ ուրախ եմ, որ գտնվելով Տալլինում, հնարավորություն ունեմ հայերի համար որեւէ խոսք ասել: Չնայած ավելի շատ ուրախ կլինեի, եթե հնարավորություն ունենայի Երեւանում ցուցադրվելու, որովհետեւ դա իմ քաղաքն է, միշտ ինձ սնել է երազներով: Ես մինչեւ հիմա տեսնում եմ իմ երեւանյան երազները, երեւի դրա համար էլ հանգիստ եմ այստեղ ապրում: Մեծ տառապանքը չի խանգարում ինձ ստեղծագործել, որովհետեւ դա ժամանակի խնդիր է: Այդ ամենը կանցնի, բայց արվեստը, որ աշխարհով մեկ ստեղծում են հայերը, անպայման կմնա: Ես չեմ համարում, թե ապրում եմ Հայաստանից դուրս: Մարմինս է ճանապարհորդում, բայց ես ամբողջությամբ իմ ստեղծագործություններով կապված եմ Հայաստանի հետ:

Ստեղծագործելն ինձ համար կամավոր աքսոր է դեպի անհայտություն, դեպի տիեզերք»:

Գայանե ԱՅՐԻԿՅԱՆ

Կոչ հայրենի հայութեան

«Հայկական ժողովրդային շարժում» կազմակերպությունը Աթենքից հրատարակության խնդրանքով մեզ է ուղարկել իր կոչը՝ ուղղված հայրենի ժողովրդին, սեպտեմբերի 21-ի հանրաքվեի առթիվ:

21 սեպտեմբերին՝ հայրենի հայութիւնը հրաւիրուած է հանրաքուէով իր կամքը արտայայտելու Հայաստանի Հանրապետութեան Խ. Միութենէն անջատման եւ պետական անկախ կարգավիճակի յետագայ խորացման ու նուիրականացման խնդիրներու վերաբերեալ:

Ազատ ու անկաշկանդ պայմաններու մէջ ժողովրդային կամքի դրսեւորումը եւ անկէ բխող ազգային-քաղաքական պարտաւորեցումներն ու հետեւութիւնները, ժողովուրդներու պատմութեան ամենանշանակալից էջերը կը կազմեն:

Հայ ժողովուրդի պարագային, սոյն եղելոյթը բազմատեսակ իմաստներով ճակատագրական հանգամանք կը զգենու, որովհետեւ ան տեղի կ՛ունենայ մեր ժողովուրդին համար մասնաւորապէս եւ համաշխարհային քաղաքական զարգացումներուն համար ընդհանրապէս՝ բարդ ու արագընթաց վերափոխումներու տարերքին մէջ:

Հայրենի հայութիւնը՝ 21 սեպտեմբերի հանրաքուէով, հանդէս պիտի գայ որպէս տնօրինողը համայն հայութեան ճակատագրին, որովհետեւ հայրենի հողին վրայ անոր կամքի արտայայտումը, պիտի նախագծէ ոչ միայն Հայաստանի քաղաքաքընկերային *կարգավիճակի*, այլ մանաւանդ՝ անոր *գոյավիճակի* յետագայ զարգացումները:

Անոր համար ալ հոն տեղի ունեցող հանրաքուէն, բնականաբար եւ արդարօրէն կը շահագրգռէ համայն աշխարհի սրտացաւ հայերը:

Հայկական Ժողովրդային Շարժումը՝ մեկնած վերոյիշեալ համոզումներէն, բայց՝ մանաւանդ հեռու անտեղի միջամտութիւններով, ինքզինքին Հայաստանի մէջ անպայման տեղ մը ապահոված ըլլալու այլոց շահադիտական եւ հատուածամոլական ախորժակներէն, իր կոչը կ՛ուղղէ մասնաւորաբար հայրենի հայութեան եւ կը հրաւիրէ զայն, որ՝

ա) Ան ստուար շարքերով մասնակցի հանրաքուէին՝ որպէս ապացոյց իր եւ համայն հայութեան ճակատագրին հետ առնչուող խնդիրներուն նկատմամբ, անոր տածած գիտակից, լրջախոհ եւ պատասխանատու կեցուածքին:

բ) Իր դիրքորոշումը արտայայտէ հիմնուած՝ միմիայն ազգային գերագոյն շահերուն եւ անկէ բխող հրամայականներուն նուիրականացման անհրաժեշտութեանց եւ ոչ թէ կուսակցական կամ հատուածական, տեղայնական ու խմբային նախասիրութիւններուն եւ նախընտրութիւններուն վրայ:

գ) Խոր գիտակցութիւնը ունենայ, որ իր քուէով կ՛արտայայտուի հարցադրման մը մասին, որուն չ՛ընկերանար յստակ բանաձեւուած ազգային ծրագիր մը, անոր համար ալ հայրենի հայութեան այո-ն կամ ոչ-ը հիմնականօրէն ցուցիչ պիտի ըլլայ՝ ազգային-գաղափարական կեցուածքի մը եւ ո՛չ թէ անկախութեան ձգտումի նուիրականացման համար նախասահմանուած ծրագրի մը նկատմամբ կողմնորոշման:

դ) Մտաբերէ, թէ ոեւէ ժողովուրդ իր անկախութիւնը չէ ապահոված նուէրկութեամբ: Տեղի ունենալիք հանրաքուէն իր որեւէ տեսակի արդիւնքով նախամայրն է, նետուած առկայ երկու ճանապարհներէն որեւէ մէկուն ուղղութեամբ, որոնց երկայնքին մեր ժողովուրդին կը սպասեն այլեւայլ խոչընդոտներ, զոհողութիւններ, նոյնիսկ տաժանքներ:

ե) Օրինակելի կեցուածքով հաստատէ, թէ անկախութեան գաղափարը կենդանի բոլոր ժողովուրդներու անմար ձգտումն է, իսկ անոր նուիրականացումը՝ նոյն ժողովուրդի կենսունակութեան հաստատագիրը, որուն կրնայ արժանանալ ան, միայն ու միայն քաղաքական, ընկերային, մշակութային եւ հոգեբանական ճակատներուն վրայ հետեւողականօրէն ջրեղուող ազգային անկախ նկարագիրով ու անշեղ, նպատակասլաց եւ յաճախ հանգրուանային գործընթացով:

Հայկական ժողովրդային շարժումը հաստատ համոզուած է, որ հայրենի հայութիւնը կ՛արտայայտէ իր կամքը վճռականօրէն, գիտակից այն ճանապարհին, որմէ պիտի ընթանայ ան, հանրաքուէի վաղորդայնին:

20 յուլիս 1991

Հայկական ժողովրդային շարժում

Նոմենկլատուրային արտոնությունները ժառանգակա՞ն են...

-Ո՛չ,- ասում է նախարարների խորհրդի գործերի կառավարչի պաշտոնակատար Հրաչ Հակոբյանը

Մինչեւ վերջերս մամուլը լեցուն էր նոմենկլատուրայինների բարքերն ու կամայականությունները քննադատող, դատափետող հրապարակումներով: Նկատի էին առնվում առաջին հերթին դրանց զանազան արտոնությունները «հասարակ մարդկանց» ապրելակերպի համեմատ:

Այսօր այդ առումով տիրող լռության մեջ լսվում են օրեցօր ուժգնացող շշուկներ: Շատ «իրազեկ» մարդիկ վստահելի տեսքով պնդում են, որ նոր ղեկավարներն իրար մեջ մեքենաներ են բաժանում, որ նրանցից շատերը շրջում են արտասահմանյան բարձրակարգ մեքենաներով ու նշում են դրանց ձեռքբերման աղբյուրները, որ...

Նմանատիպ մի շշուկ, թե շուտով նորերը կբնակվեն նաեւ տխրահռչակ պետական առանձնատներում, թերթի հրապարակման նյութ դարձավ: Ռուսալեզու «Էպոխա» պարբերականն իր հուլիսի 25-ի համարում ընթերցողներից ներողություն խնդրեց այն նախկին հայտարարությունների համար, իբր արտոնությունների ժամանակներն անցել են... Իհարկե, լրագրողական հետամտությունը ցույց տվեց, որ պետական առանձնատները գոնե առայժմ դատարկ են, բայց այդ փաստը կորել էր կասկածամիտ ենթադրությունների եւ մտացածին ակնարկների բառահեղեղում...

Այդպիսի շշուկ-հրապարակումները վերջինը չեն, մանավանդ պաշտոնական նոր շրջանակները հրապարակայնորեն չեն ձեւակերպել արտոնությունների վերաբերյալ դիրքորոշումը եւ այդ կապակցությամբ ստույգ տվյալներ, փաստեր չեն ներկայացրել:

– Մեզ շատերն են մեղադրում, որ հիմա էլ պահպանված ինչ-ինչ արտոնություններ կան, բայց մատնացույց անել չեն կարողանում, որովհետեւ... իսկապես այդպիսիք չկան: Հետո այն, ինչ սնանկացած հոգեբանությունը որպես արտոնություն է դիտում ուղղակի ծառայողական անհրաժեշտություն է: Օրինակ, քանի որ մեր հեռախոսային կապը բարվոք վիճակում չէ՝ ենթադրվում է, որ կառավարական հեռախոս ունենալը արտոնություն է: Ցանկացած երկրի ցանկացած գերատեսչություն իր առանձին կապի միջոցն ունի, որն ուղղակի պարտադիր է աշխատանքի կանոնավոր կազմակերպման համար:

Ուրիշ է՞լ ինչեր են որպես արտոնություն դիտվում... Հագուստով, սննդամթերքով հատուկ սպասարկումը, խոստովանենք, որ մենք չենք վերացրել: «Վերակառուցումն» արդեն հասել էր Հայաստանին եւ 1989-ի վերջին, թե 1990-ի սկզբին հին իշխանությունները վերացրին այսպես կոչված «բազաները»:

- Իսկ ի՞նչ կասեք հատուկ բուժսպասարկման մասին: «Լեչկոմիսիաների» լուծարման հարցում ուղղակի ցուցանակի փոփոխություն չեղա՞վ: Դրանք կցվեցին պոլիկլինիկաներին եւ շարունակեցին նախկին ձեւով աշխատանքը:

– Ձեր ասածը վերաբերում է Միությանը: Մեզ մոտ ցուցանակն էլ չի փոխվել: «Լեչկոմիսիաները» մնում են, ավելի ստույգ՝ առողջապահության նախարարությանը ենթակա չորրորդ գլխավոր վարչության կարգավիճակը դեռ չի որոշվել եւ անորոշ է՝ ում պետք է սպասարկի: Նոր իշխանություններին այդ առումով մեղադրել չի կարելի: Ինչքան գիտեմ, ո՛չ Գերագույն, ո՛չ Նախարարների խորհուրդներից որեւէ «նոր» այնտեղ հաշվառման կանգնած չէ՝ շարունակում են իրենց պոլիկլինիկաներում բուժվել: Միայն հին աշխատողներն են «լեչկոմիսիաներում» մնացել:

Պետական ամառանոցները մեծ մասամբ անվանական էին՝ կցված էին որեւէ պաշտոնյայի: Նրանց անունները մինչեւ այժմ էլ պահպանվել, «կպել» են այդ ամառանոցներին...

- Միա՞յն: Դրանցից ոչ մեկը նախկին տերերին «իներցիայով» բաժին չհասա՞վ: Օրինակ, ի՞նչ եղավ Կարեն Դեմիրճյանի ամառանոցը:

– Ո՞ր մեկը: Շատ տեղերում է նրա անունը պահպանված: Այդ մարդն, այնուամենայնիվ, մեր պատմության մեջ որպես շինարար կմնա: Նրա գործունեությունն իսկապես շինիչ էր, բայց իրեն ոչինչ բաժին չհասավ: Տեսեք, որ նա անձնապես ամառանոց չի էլ ունեցել: Դրանք եղել են բարձրաստիճան հյուրերի համար նախատեսված ամառանոց-հյուրատներ, որոնցից մի քանիսը նույնիսկ չորրորդ վարչության տնօրինության տակ էին:

Իսկ «կցված», անվանական ամառանոցները ենթակա էին Նախարարների խորհրդի տնտեսական վարչությանը, գործերի կառավարչությանը: Ամբողջ տարին տվյալ ամառանոցը կցված էր մի մարդու, բայց նա վճարում էր փաստացի մնացած օրերի համար: Վարձն էլ զուտ խորհրդանշական էր՝ ամսեկան մի 50 ռուբլի:

Նախկինում ծեծված մեկ ուրիշ արտոնություն մեքենաներն էին: Գոյություն ունի մեքենաների պահպանման սահմանափակ

Լուսանկարը՝ Լեւոն ԱՐՍԵՆՅԱՆԻ

հասկացությունը: Աշխատանքի կարեւորությունից, բնույթից ելնելով՝ որոշ պաշտոնյաների համար այդպիսի սահմանափակներ են որոշվում: Այստեղ էլի ծագում է այն հավերժական հարցը, թե հա՞վն է ձվից, թե՞ ձուն հավից... Երբ պետք է պահպանել վարչական կառավարման համակարգը, երբ մեզ պետք են այդ «չինովնիկները»՝ նրանցից շատերի աշխատանքի բնույթը կապված է հենց այս արտոնությունների հետ: Ուրիշ հարց է, թե այդքա՞ն մեքենաներ են պետք, թե՞ ավելի քիչ: Այդ հարցը օրակարգում է. մենք պատրաստվում ենք մեկ երրորդով կրճատել բյուջետային կազմակերպությունների մեքենաների պահպանման սահմանափակը: Բայց մեկ ուրիշ՝ ներկայանալիության հարց կա, որը նույնպես կարեւոր է լուծել:

- Դե իհա՞րկե, կասկած չի հարուցում, որ տնտեսական այս վիճակում մենք այնուամենայնիվ պիտի ձգտենք, որ մեր ղեկավարները ըստ միջազգային չափանիշների ներկայանալի լինեն...

– Միջազգային չափանիշներից մենք շա՞տ ենք հեռու: Խոսքը միայն աշխատանքային շարժական պահանջների բավարարման մասին է:

- Այսօր ձեր համակարգում գործող նյութական տնտեսության վարչության ծառայություններից օգտվում են Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ ՀՀՇ վարչության նախագահ Վանո Սիրադեղյանը: Ըստ երեւույթին, առաջին դեպքում դա անհրաժեշտություն է՝ ներկայանալիությունից բացի, նաեւ անձնական ապահովության նպատակով, երբ Լեւոն Տեր-Պետրոսյանի ընտանիքի հետ կապված ինչ-ինչ փորձեր, դեպքեր են տեղի ունենում: Իսկ ինչո՞վ է պայմանավորված մի կազմակերպության ղեկավարի այնտեղ գտնվելը:

– Պատասխանատվությունից խույս տալու համար չեմ ասում, բայց նշեմ, որ ես գործերի կառավարչի պաշտոնակատար եմ 1990-ի հոկտեմբերի 15-ից, իսկ թե երբվանից է Վանո Սիրադեղյանն այնտեղ ապրում, ո՛վ եւ ինչ պայմանավորվածությամբ է նրան այնտեղ տեղավորել՝ հարցրեք իրեն: Ես այդ հարցին պատասխանել չեմ կարող:

- Իսկ մնացած ամառանոցները նորերի իշխանության գալուց հետո ինչպե՞ս են օգտագործվել: Ի դեպ, քանի՞ ամառանոց կա գործերի կառավարչության տնօրինության տակ:

– Մոտ 230-ն են, որոնց մի մասը վթարային վիճակում է եւ՛ երկրաշարժի, եւ՛ վերանորոգման համար գումարներ չունենալու հետեւանքով: Մի քանիսում՝ օրինակ Աղվերանի եւ Ծաղկաձորի ամառանոցներում՝ փախստականներ են ապրում: Մի երկու տնակ հատկացրել ենք «Սփյուռք» փրկարարական ջոկատին: Մյուս ամառանոցները համարյա երկու-երեք տարի է, ինչ դատարկ են: Չգիտեմ, թե նախկինում ինչու չեն օգտագործվել, իսկ հիմա ուղղակի հարցի լուծումն է ձգձգվում՝ մինչեւ արտոնությունների մասին օրենքի ընդունումը, որը ինչ-որ կերպ կկարգավորի այս հարցը:

Մենք առաջարկում ենք դրանք օգտագործել որպես գերատեսչական ամառանոցներ: Խնդրում եմ ինձ ճիշտ հասկանալ, այստեղ էլ մարդիկ իրենց ընտանիքների հետ հանգստի կարիք են զգում, այնպես, ինչպես ցանկացած գիտաարտադրական միավորման, տնտեսական ձեռնարկության աշխատակիցները: Մենք հենց սկզբից հրաժարվեցինք «կցումների» արատավոր սկզբունքից: Մշակել ենք ուղեգրերով հանգստի առաջարկներ: Վերջերս կարդացի այդ հարցի կապակցությամբ Ուկրաինայի որոշումը, ըստ որի պետական ամառանոցներից անվճար պիտի օգտվեն միայն Գերագույն խորհրդի նախագահը եւ վարչապետը: Չգիտեմ, միգուցե նմանատիպ մի որոշում էլ մենք ընդունենք:

Համենայն դեպս, եթե այդ ամառանոցները դիտվեն որպես արտոնություն, թող վերցնեն մեզանից, բայց այդ դեպքում ես՝ որպես գործերի կառավարչի պաշտոնակատար, հարց կբարձրացնեմ, որպեսզի հնարավորություններ ստեղծե՛ն՝ շինանյութ, գումարներ հատկացնեն գերատեսչական ամառանոցների կառուցման համար:

Մի կողմ 230 եղածների առկայությամբ նոր, արդեն ոչ միայն ղեկավարության համար նախատեսված ամառանոցների կառուցման նպատակահարմարությունը: Մտահոգիչը այդ արտոնություն համարվող ամառանոցների կապակցությամբ տիրող վիճակն է՝ նման այն խոտի դեզին, որի վրա նստած է պարտիզպանի շունը, որը ոչ ինքն է խոտը ուտում, ոչ էլ ուրիշին տալիս...

Անահ ԽԱՐՏՅԵԼՅԱՆ

Բնակարանամուտ... փաստաթղթերում եւ իրականում

Կիրովականում բնակարան ստացողների ցուցակները նայելիս անտեղյակ մարդիկ երեւի բարի նախանձով կլցվեն «երջանիկների» նկատմամբ:

Մինչդեռ իրականությունը շատ ավելի մտահոգիչ է, նույնիսկ տագնապալի:

Թիվ 10 ԲՇՏ-ն ընդգրկում է Տարոն 1,2,3 թաղամասերը: Քաղխորհրդի գործկոմի կողմից այդ տարածքում բաշխվել է 1458 բնակարան, որոնցում պետք է բնակվեր 5132 մարդ:

«Պետք է բնակվեր...», որովհետեւ 605 ընտանիքների առայժմ մնում է բավարարվել... միայն բնակարանի օրդերներով:

Դրանցից 306-ում շինարարների հետ մեկտեղ նաեւ տանտերերը կատարում են ներքին հարդարումներ:

Պարզվում է, որ նոր կառուցվող շենքերի բնակարանների բաշխումն ունի նաեւ բացասական կողմեր: Դրա վկայությունն են 299 կիսակառույց բնակարանները (20 շենքերում), որոնց թվում կան նույնիսկ հազիվ մեկ հարկը ավարտած կիսակառույցներ: Գործը դանդաղում է անհրաժեշտ շինանյութերի եւ բանվորական ուժի պակասի պատճառով: (Այսօր քաղաքի շինկազմակերպություններում մոտ 900 շինարարի պակաս է զգացվում):

Երբ շրջում ես Տարոն 2 թաղամասում, տեսնում բաշխված կիսակառույց շենքերը, ճնշող տպավորությունը տանում է քեզ տխուր մտորումների լաբիրինթոսը:

Իսկ փաստերը խոսում են: Բազմաթիվ շենքերի բնակարանատերերը, դեռեւս հայտնի չէ, թե երբ են սպասելու բնակեցմանը: Իսկ ԲՇՏ 4-ի թիվ 28, 29 շենքերի բնակարանները բաշխվել են դեռեւս անցած տարվա մարտ ամսին, սակայն բնակեցնելու համար անհրաժեշտ պայմաններ դեռ չկան:

ղանք ԲՇՏ 4-ի թիվ 35 շենքում, որը դեռ չի բնակեցվել, բայց թիվ 3 բնակարանում ողներ կան:

– Շենքի նկուղային հարկում ստորգետնյա ջրեր են կուտակվում, հատակն էլ առայժմ մանրահատակով պատելու հնարավորություն չունենք, սակայն ստիպված ենք 3 անչափահաս երեխաների հետ ապրել այս «սառնարանում»..., - բողոքում է տանտիրուհին՝ Ա. Ավետիսյանը:

Տեսարան «Տարոն» թաղամասից

Լուսանկարը՝ Ս. Ղուկասյանի

– Շենքը բաշխվել է փետրվարին, հանձնաժողովն ընդունման փաստաթղթերը ստորագրել է մեկ ամիս առաջ,- բացատրում է թիվ 10 ԲՇՏ-ի պետ Ս. Անտինյանը,- բայց մենք չենք բնակեցնում, որովհետեւ շենքը հանձնվել է բազմաթիվ թերություններով, չկան ապրելու տարրական պայմաններ:

ԲՇՏ 3-ի թիվ 93 շենքի բակում մեզ անմիջապես շրջապատեցին բնակիչները:

– Երկու ամսից ավելի՝ գազ, ջուր, էլեկտրականություն չունենք, ինչպես պահեմ փոքրիկներիս, հաճախ են հիվանդանում,- բողոքում է թիվ 11 բնակարանի բնակչուհի Սսյա Սարուխանյանը,- ինչո՞ւ շենքերը չեն ընդունում պատրաստ, ավարտուն վիճակում:

– Որոշ կոմունալ ծառայություններ ժամանակին չեն կատարում իրենց գործը, որը նույնպես դժվարացնում է բնակեցումը: Օրինակ՝ վերջին ժամանակներս 4-5 անգամ գրավոր դիմել ենք գազի միջշրջանային տնտեսության վարչությանը՝ շենքերի գազամատակարարումը փորձարկելու խնդրանքով, սակայն ոչ մի պատասխան չենք ստացել,- պարզաբանում է ԲՇՏ-ի պետը:

Վիճակը բարվոք չէ նաեւ Տարոն 4 թաղամասում, որտեղ առ այսօր շահագործման է հանձնվել 80 շենք՝ 1232 բնակարանով: Թաղամասում գրանցված է ավելի քան 4 հազար մարդ:

Իսկ ի՞նչ պատճառներով են թերբնակեցվում շենքերը, քաղաքացիները ինչո՞ւ են խուսափում նոր բնակարաններ տեղափոխվելուց: Ինչո՞ւ են շենքերը շահագործման հանձնվում առանց կենցաղային տարրական պայմանների:

Պատասխանում է քաղխորհրդի բնակարանային տնտեսության վարչության պետ, բնակարանների պետընդունման հանձնաժողովի անդամ Վ. Անդրեասյանը:

– Թերբնակեցման գլխավոր պատճառը բնակարաններում ներքին բարեկարգման աշխատանքների անհրաժեշտությունն է, ապա՝ թաղամասերում կուլտուր-կենցաղային, առեւտրի օբյեկտների բացակայությունը, մսուր-մանկապարտեզների, դպրոցների հարցը, շրջակայքի անբարեկարգությունը, տրանսպորտի, կապի միջոցների վատ աշխատանքը: Առանձին դեպքերում քաղխորհրդի բնակֆոնդի հաշվառման եւ բաշխման բաժնի կողմից ժամանակին չեն հատկացվում բնակեցման համար պատրաստ շենքերի բնակարանների օրդերները...

Հաճախ բնակեցման գործում թերանում են նաեւ ԲՇՏ-ները:

Ինչ վերաբերում է պետընդունման հանձնաժողովին, կասեմ, որ առանձին դեպքերում զիջումների գնալու հիմնական պատճառը նյութատեխնիկական մատակարարման անբավարար վիճակն է, շինարարության ֆինանսավորման գործում հանրապետությունում առկա լուրջ դժվարությունները, բանվորական ուժի պակասը: Այս ամենը օբյեկտիվորեն ներազդում են շինարարության տեմպերի վրա: Եւ շինարարները, հաճախ գործի ձգձգման մեջ մեղք չունենալով, կարող են զրկվել նյութական խրախուսումներից: Եւ դա այն դեպքում, երբ բանվորական ուժի պակաս է զգացվում:

Դիմեցինք քաղխորհրդի գործկոմի բնակֆոնդի բնակարանների հաշվառման եւ բաշխման բաժնի վարիչ Վ. Մարտիրոսյանին. «Ինչո՞ւ ժամանակին չեն հատկացվում օրդերները»:

– Բնակարանների բաշխման վիճակահանությունից հետո, ամենաուշը հաջորդ օրը, օրդերները պատրաստ են լինում, ուշացումները կարող են լինել միայն այն դեպքում, երբ բնակարանատերը դուրս չի գրվում նախկին հասցեից:

Դժվար է միանշանակ գնահատական տալ արծարծված հարցերին: Շինանյութերի անկանոն մատակարարումը, շրջափակումները, մեզ օգնության եկած շինարարների արտահոսքը բացասաբար են անդրադառնում կառուցման թե՛ որակի, թե՛ արագության վրա: Սակայն...

Մարդիկ բնակարան են ստանում փաստաթղթերում, իսկ իրականում... պատճառաբանությունների մի մեծ շարանի ետեւում չի երեւում հարցին լուրջ մոտենալու որեւէ փորձ...

Մանիկ ՄԻԿՈՅԱՆ
Կիրովական

ՉԱՈՒՇԵՍԿՈՒԻ ՈՒՐՎԱԿԱՆԸ

Հասարակ ժողովրդի, նույնիսկ նոմենկլատուրայի համար Առաջնորդն իրականում մեռած չէ

Հանգչող, նորացող մոմերը վառվում են առավոտից երեկո: Անհայտ ձեռքեր դրանք օրը մի քանի անգամ փոխում են: Ո՞վ կարող էր վառել այս մոմերը Նիկոլաե Չաուշեսկուի գերեզմանի վրա: Բուխարեստի զինվորական գերեզմանատանը՝ Գենչեայում, ոչ ոք չի ուզում դրա մասին լսել: Նույնիսկ հրաժարվում են ցույց տալ, թե ուր են գտնվում «Կարպատների հանճարն» ու նրա կին Ելենան: *«Փնտրեք այնտեղ, ուր մարդիկ կան: Կգտնեք»*: Իրարից հեռու ընկած երկու բլրակ, ծաղիկներով ծածկված, հարթեցված երկու հողաթումբ: Սակայն, միայն Չաուշեսկուի ենթադրյալ գերեզմանն է, որը ոչ քար ունի, ոչ ցուցանակ, ոչ խաչ, այս կիսայրված մոմերի պատվին արժանացել: Ելենայինն ատում էին:

Իրականում, այստեղ, այս գերեզմանոցում է թաղված Ռումինիան դողացնող այդ անիծյալ զույգը: Շատերը չեն ուզում դրան հավատալ: Ոչ մի ապացույց, ոչ մի տրամաբանական պատճառաբանություն, ոչ մի վկայություն չեն կարող նրանց շեղել այդ սեւեռուն գաղափարից: Չաուշեսկուները դեռեւս ողջ են: Հապա հեռուստատեսությամբ, լուսանկարների վրա պատկերված դիակնե՞րը: Խաբեբայություն է: Գնդակահարությունը չի նկարահանվել: Իսկ գնդակով ծակված մարմիննե՞րը, ուռած դեմքե՞րը: Նմանակներ են: Բոլորին հայտնի էր, որ Չաուշեսկուն երբեմն իրեն փոխարինում էր իր եղբորով՝ Նիկոլաե Անդրուտայով եւ բեսարաբացի մի կրկնորդով: Սակայն չէ՞ որ 1989-ի դեկտեմբերի 21-ին նրանք էին կանգնած պատշգամբում, երբ որ ամբոխը նրանց անարգում էր: Բոլորովին էլ ոչ: Հիշո՞ւմ եք հեռուստաֆիլմը. մի պահ Չաուշեսկուի ետեւում կանգնած մեկը բռնեց նրա թեւից: Ոչ ոք իրավունք չուներ կպչելու Առաջնորդին: Ուրեմն դա Չաուշեսկուն չէր: Այդ դեպքում, որտե՞ղ են թաքնվում նրանք: ԽՍՀՄ-ում կամ Իրանում: Խ. Միությունը նախազգուշացրել էր, թե ի՞նչ է հյուսվում նրանց դեմ:

Այս բոլոր անհեթեթությունները ակնհայտորեն հիմնվում են լոկ հավաքական երեւակայության զարմանալի երեւույթի վրա: Բանտ ու տառապանքներ ճաշակած հարյուր հազարավոր ռումինացիներ կարող են հանգիստ քնել: Չաուշեսկուն եւ նրա կինը վերջնականապես մեռած են: Նրանց հապճեպ դատավարության կազմակերպիչներ գեներալ Ստանկուլեսկուն, որ այդ ժամանակ պաշտպանության փոխնախարարն էր (այսօր՝ արդյունաբերության նախարար), եւ չափազանց խորհրդավոր Ժելու Վոյկանը՝ ժամանակավոր կառավարության փոխվարչապետը, դա հաստատեցին վերջերս հրապարակված իրենց գրքով: Գիրքը լեցուն է հոգեցունց մանրամասներով:

Այսպիսով, դիկտատորի մահը ոչ մի կասկած չի հարուցում: Ինչը, սակայն, չի խանգարում, որ շշուկներն անարգել կերպով տարածվեն:

Գրող Մարսել Պետրիզորը, որ դասավանդում է Բուխարեստի լիցեյներից մեկում (տասներեք տարի բանտ է նստել, երկու անգամ դատապարտվել մահվան) հետեւյալ բացատրությունն է տալիս. *«Հասարակ մարդկանց համար, հատկապես գյուղացիների, Չաուշեսկուն դարձել էր գերբնական մի արարած: Նրանք չեն կարողանում ընդունել մի մարդու մահը, որը տարիներ շարունակ իրենց էր հրամայում կյանքը»*:

Սակայն նույն հեքիաթը հաճախ պատմվում է մտավորական շրջանակներում:

Յաշիի դեղագործական ֆակուլտետի դեկանը, օրինակի համար, հավատում է, թե Ելենան (ինչո՞ւ նա) փրկվել է մահվանից: Նա Պուատիեից ժամանած մարդասիրական մի խմբի առաջ պնդել է, թե *«Ելենան արտասահմանում է, նա պատրաստվում է վերադառնալ»*:

«Չաուշեսկուների կենդանության մասին առասպելն անմեղ չէ, բացատրում է ընդդիմության գլխավոր թերթի՝ *«Ռոմանիա Լիբերայի»* գլխավոր խմբագիր Կոռնելիու Վլադը: *Ռեկտորների մեծամասնությունը Սեկուրիտատեի (Չաուշեսկուի քաղաքական ոստիկանություն) նախկին անդամներ են: Այս մարդիկ, որոնք ներկա նեոկոմունիստական վարչակարգի կմախքն են կազմում, ջանք են թափում հասարակական կարծիքի մեջ պահպանել այն առասպելը, թե զույգը ողջ է, եթե ոչ ֆիզիկապես, գոնե բարոյապես»*:

Վերջերս Չաուշեսկուի նախկին մի դեսպան Աֆրիկայում՝ Պորֆիր Նեգրեան, հայտարարեց, թե ստեղծվել է համընդհանուր ներման կոմիտե եւ առաջարկեց այդ կոմիտեի պատվավոր նախագահ նշանակել մի բանտարկյալի՝ բռնակալի նախկին արտգործնախարար Ստեֆան Անդրեին, որը Չաուշեսկուին հավատարիմ մնաց մինչեւ վերջին օրը:

Պարբերաբար որոշ թերթեր, ինչպես ասենք *«Եուրոպան»* կամ *«Ռոմանիա Մարե»* (Մեծ Ռումինիա), որ գլխավորում են Սեկուրիտատեի նախկին գործակալները, իսկ այժմ, նացիոնալ-կոմունիստներ լինելուց հետո, ծայրահեղ ազգայնականները (հակահունգարներ եւ հակասեմիտներ) դափնեպսակներ են հյուսում «Կարպատների հանճարին», երկրով մեկ նրա արած բարեգործությունների համար: Դիկտատուրայի քաղցր օրերին, ասում են նրանք, ամեն ինչ շատ ավելի լավ էր, քան այսօր...

Գաղտնի կերպով համաձայնեցված արշավ է տարվում հավաստիացնելու մարդկանց, թե Չաուշեսկուն անջնջելի հետք է թողել Արեւմուտքի վրա: Օրինակի համար, լուրեր են տարածվում, թե նրան նվիրված բանաստեղծությունների զանազան ժողովածուներ բեստսելլերներ են Ֆրանսիայում եւ Գերմանիայում, թե դրանք վաճառվում են չլսված գներով: Բուխարեստում բարգավաճում է հուշանվերների շուկան, ուր այստեղ-այնտեղ, բուլվարների վաճառասեղանների վրա «մեծի փարոսի» եւ նրան նվիրված հատորները վաճառվում են դոլլարով: Սակայն, թվում է, լոկ օտարերկրացիներն են դրանով հետաքրքրվում:

Այդ արշավը փորձում է միաժամանակ համոզել հասարակությանը, թե աշխարհը նախանձում է ռումինացիներին այն մեծ գործերի համար, որ մեծագործ դիկտատորը թողել է իրենից հետո:

Չաուշեսկուին ափսոսո՞ւմ են: *«Նոմենկլատուրայի բոլոր մարդիկ, իհարկե*, ասում է Կոռնելիու Վլադը, *նաեւ հասարակ ժողովրդի մի մասը: Դիկտատուրայի օրով պետությունը, թեեւ բռնապետության մեջ, հոգ էր տանում ամեն ինչի մասին. բնակարան, աշխատանք, սնունդ, ապահովություն, երեխաների ապագա: Ամեն մեկը նախօրոք գիտեր իր ճակատագիրը: Այսօր ազատություն կա, սակայն կա նաեւ՝ անապահովություն, թանկ կյանք, գործազրկություն, վաղվա օրվա նկատմամբ անորոշություն»*:

Հատկանշական տեսարան Բուխարեստի զինվորական մարզադաշտում, ուր ֆուտբոլի խաղ էր կայանում: Հանկարծ հնչեց ծափահարությունների որոտ: Հանդիսականները մի մարդու նման ոտքի կանգնեցին: Չաուշեսկուի ավագ որդին՝ Վալենտինը, անմեղ ճանաչված դատարանի կողմից, քիչ առաջ մտել էր տրիբունաներ:

Միշել ՏՈՄԱ
«Լը Պուէն», 26 յուլիս 1991

Դրակուլայի խոստովանությունը

Նիկու Չաուշեսկուն՝ «դիկտատուրայի վերջին ուրվականը», Չաուշեսկուների սիրեցյալ զավակը, իտալական «Պանորամա» հանդեսի առաջ բարձրացնում է վարագույրը եւ վեր հանում ընտանեկան-քաղաքական որոշ մանրամասներ:

– Նիկու, դուք չուզեցիք ծանոթանալ ձեր ծնողների դատավարության եւ մահապատժի տեսաժապավեններին: Ի՞նչ է, վախենու՞մ եք:

– Ես միշտ ասել եմ, չեմ ուզում տեսնել այդ ժապավենը այն բանի համար, որ այնտեղ մի տարի առաջ Բուխարեստում կատարվածի մասին ոչ մի ճիշտ բան չկա: Այն, ինչ տեսել եք դուք, սուտ է: Ամբողջ պատմությունը սարքված է սկզբից եւեթ:

– Ձեզ հայտնի է ա՞յդ ճշմարտությունը:

– Ես այն զգում եմ ներքուստ: Հոգուս խորքում համոզված եմ, որ ծնողներիս սպանելն անտրամաբանական էր: Այն մարդուն, որը, ինչպես դուք եք ասում, թագավորել է երկրում քառորդ դար շարունակ, չեն գնդակահարում [illegible], նրա տապալումից մի քանի ժամ հետո: Նրան հնարավորություն են տալիս արտահայտվել, նրանից պատասխան են պահանջում արածի համար:

– Ո՞վ էր հրամայում Ռումինիայում:

– Նիկոլաե Չաուշեսկուն պետության ղեկավարն էր, գոնե թղթի վրա: Սակայն վերջին տարիներին հայրս ամբողջովին ենթարկվում էր մորս եւ նրան շրջապատող պալատական կամակատարների կամքին: Մայրս ամեն ինչ վճռում էր ներքին գործերի նախարար Թուդոր Պոստելնիկուի (գաղտնի ոստիկանության պարագլուխ, այժմ տաժանակիր աշխատանքների դատապարտված) եւ մի փոքր խումբ այլ մարդկանց հետ:

– Ըստ ձեզ, ինչի՞ մեջ էր Նիկոլաե եւ Ելենա Չաուշեսկուների սխալը:

– Նրանք չէին տեսնում, թե ինչ է կատարվում երկրում, արեւելաեվրոպական երկրներում: Կամ էլ չէին ուզում տեսնել:

– Եթե դուք զգում էիք, ապա ինչու՞ նրանց չնախազգուշացրիք վերահաս վտանգի մասին:

– Երբ ես զանգահարեցի Բուխարեստ, պալատ, ինձ պատասխանեցին, թե նրանք արդեն փախել են: Այս պատմության մեջ ահա եւս մի կարեւոր հանգամանք. ծնողներս մահվան ընդառաջ էին գնում, չնախազգուշացնելով անգամ սեփական զավակներին: ■

Լուսանկարներ լռության կղզիներից

Այս խորագրի տակ ամերիկյան Time շաբաթաթերթն իր հուլիսի 22-ի համարում 6 էջ է նվիրել խորհրդային հեռավոր կալանավայրերին՝ օգտագործելով բոլորովին անտիպ եւ ցնցող լուսանկարներ, որոնց հեղինակն է Սերգեյ Վասիլեւը, որի մասին թերթը նշում է, թե նախապես նա եղել է քննիչ եւ նրան հաջողվել է «անմահացնել» բանտային ըմբոստության տեսարաններ, «ներքին» ամուսնություններ եւ ամուսնական հարաբերություններ, նաեւ ազատության երազանքը մի կալանավորուհու, որն այդ բոլորն արտահայտել է իր մարմնի վրա դաջվածքներով, ինչպես ուրիշներ:

Թերթն ավելացնում է, որ սոլժենիցինյան Գուլագ Արխիպելագը, որ հաշվում էր 1053 արգելավայրեր եւ աշխատանքային ճամբարներ, այժմ, *գլասնոստից ու պերեստրոյկայից* հետո, քաղաքական բանտարկյալների ազատ արձակելու պատճառով կրճատվել եւ հաշվում է մոտավորապես 65 հազար կալանավոր: Այսուհանդերձ, մինչ այդ, բանտերից ընդամենը մի քանիսն են բաց լրագրողների առաջ, մեծ մասամբ դրանք մնում են նույնքան անթափանցելի՝ որքան տայգան ինքը:

Հրապարակվող լուսանկարները առիթ են տալիս ներքին հայացք գցել Չելյաբինսկի մոտ գտնվող մի քանի կալանավայրերի: Դրանցից մեկում, որտեղ 1000 կին բանտարկյալներ են հավաքված, Վասիլեւն ականատես է եղել կոմունիստական անփառունակ անցյալի նորագույն դրսեւորումներին, երբ բանտարկյալներին ստիպում են նշել ԽՍՀՄ-ի ստեղծման տարեդարձը: Իսկ խիստ ռեժիմի հարեւան ճամբարում, որտեղ կանայք եւ տղամարդիկ միասին են անցկացնում իրենց տաժանելի տարիները, լուսանկարիչը «բախտ» է ունեցել ներկա գտնվելու ըմբոստացման մի շարժումի, որը ներքին զորքերի միջոցով զսպվել է բիրտ կերպով:

Այլուր, Վասիլեւն ականատես է ավելի մարդկայնական օրենքների, ուր, օրինակ, կալանավորուհիներին թույլատրվում է ամուսնանալ կողքի ճամբարի կալանավորների հետ, եւ արդյունքում եղող զավակներին տանել մինչեւ 3 տարեկանը, որից հետո նրանց տանում են մանկատուն՝ քանի դեռ մայրը կալանքից չի ազատվել:

Մինչ կառավարությունն ավելի ազատական տնտեսական ձեւերին է անցնում, գրում է թերթը, ժամանակին էժան աշխատանքի միջոց եղած կալանավորներից շուրջ 250 հազար հոգին շուտով կարող են անգործ մնալ: Այսուհանդերձ, տակավին «փախուստ» բառը երազն է մնում կալանավայրերի բնակիչների, որոնց համար կատարվող փոփոխությունները շատ քիչ իմաստ ունեն: Վերջերս *«Օգոնյոկ»* շաբաթաթերթում հրատարակվեց մի կալանավորուհու նամակը, որտեղ գրվել է. *«Ե՞րբ է գալու հասնելու մեզ՝ կին բանտարկյալներիս: Ամեն օր նրանք մեզ շարքի են կանգնեցնում հաշվելու: Մենք ծանր սապոգներ ենք հագնում եւ մեր կրծքից կախված են մեր համարները [illegible] մետաղե մեդալներ: Երկու տարվա բանտարկությունը փչացնում է իմ տեսողությունը եւ ինձ դարձրել է հաշմանդամ, հակառակ որ ընդամենը 23 տարեկան եմ: Ժամանակի ընթացքում ի՞նչ է լինելու իմ երեխային, որն արդեն իսկ մոռացել է ինձ մանկատանը»:*

Այո, Գուլագը տակավին թրջվում է արցունքներով: ■

ԻՍՐԱՅԵԼ. «գաղութների» զենքը

Այսրհորդանանում և Գազայում ավելացնելով հրեաների թիվը՝ Շամիրը ձգտում է անշրջելի վիճակ ստեղծել: Մինչդեռ, Վաշինգտոնն ուզում է խաղաղություն հաստատել

«Ջեյմս Բեյքերը գալիս է, Ջեյմս Բեյքերը գնում է... Գիտեմ, պետքարտուղարի գնալ-գալը լավ է, սակայն անձամբ ինձ հետաքրքրում են տրակտորների հնչյունները այնտեղ...», Յոսսին մատնացույց է անում երկու բուլդոզերները, որոնք հարթեցնում են հողը Նեվե Դոտանի նոր թաղամասերի կցատնակների համար: Նեվե Դոտանը Այսրհորդանանի հյուսիսում թառած փոքր բնակավայր է, ուր ապրում են հիսուն ընտանիք: Երբ նոր թաղամասի կառուցումն ավարտվի՝ իր 40 տներով և 10 կցատնակներով, բնակչությունը կկրկնապատկվի:

Նեվե Դոտանը սոսկ մի օրինակ է, պատահականորեն վերցված մի նմուշ... Այն չափով, որ աշխատում են բետոնագործները, ավելի շուտ գրավյալ տարածքների ողջ բնակչությունը կկրկնապատկվի, նույնիսկ կեռապատկվի: Այսօր, առանց հաշվելու Երուսաղեմի նոր թաղամասերը, Այսրհորդանանում և Գազայում, ուր ապրում են 1 մլն 700 հազար պաղեստինցիներ, հրեա վերաբնակիչներն արդեն հասել են 100 հազարի: Ո՞վ կխանգարի, որ մի քանի տարուց սրանք դառնան 200 կամ 300 հազար: Ջեյմս Բեյքե՞րը: Մերձավորարևելյան խաղաղության կոնֆերանս հրավիրելու ձևերի վերաբերյալ երկար վեճերից զատ, ամերիկյան պետքարտուղարը լավ գիտե, որ այսօր հաշվեկշռի մեջ ամենածանրը կշռում է դաժան իրականությունը, «կատարված փաստերը» այն տարածքների վրա, որոնք բանակցությունների նյութ են. Այսրհորդանան, Գազայի գոտի և Գոլանի բարձունքներ: Վերջինիս կարգավիճակն այլ է, քանի որ այն բռնակցվել է Իսրայելի կողմից 1981-ին...

Ջեյմս Բեյքերը դա գիտե և երբեմն նույնիսկ դա ասում է: Մի օր նա դառնորեն դժգոհել է. *«Ամեն անգամ, երբ գալիս եմ Մերձավոր Արևելք, իսրայելցիները հայտնում են նոր բնակավայր ստեղծելու մասին...»* Ճիշտ է նաև, որ կարծես պատահականորեն, Ծոցի պատերազմի շրջանակներում ամերիկացիների ձեռնարկած խաղաղության ջանքերը համընկնում են «խոշոր աշխատանքների» նոր ալիքի հետ, որոնք ոչ թե նոր բնակավայրեր են հիմնում, դրանցից արդեն մոտ 150 հատ կան, այլ եղածները ծավալում ու զարգացնում: Այսպես, բավական է խոսել Սիրիայի հետ բանակցությունների մասին, որպեսզի իսրայելցի պատասխանատուները հայտարարեն, թե սկսել են իրականացնել Գոլանի բարձունքներում (որ պահանջում է Սիրիան) հրեա բնակչության թիվը 12 հազար վերաբնակիչներից հասցնել 14 հազարի: Այս «պատահականությունն», իհարկե, միակը չէ Շամիրի ազգայնական վարչակարգի օրոք, վարչակարգ, որ բաղկացած է Մեծ Իսրայելից մի թիզ անգամ զիջելու գաղափարին կատաղի թշնամի անձնավորություններից: Փակելու համար տարածքային նահանջի ցանկացած հնարավորություն, նոր շինարարությունների հրահանգ տրվեց. «Մեծ շինարար», բնակության նախարար Արիել Շարոնը թույլատրեց նոր վարկեր, Շամիրը վերջնականորեն սահմանեց քաղաքական նոր փիլիսոփայություն. *«ոչ մի կապ չկա խաղաղության ընթացքի և նոր բնակավայրերի միջև, քանի որ խաղաղությունը ոչ մի դեպքում չի անցնում տարածքների զիջման վրայով...»*:

Համոզվելու համար կառավարության վճռականության մեջ, Շամիրը կոնկրետացրեց այդ քաղաքականությունը, բավական է այցելել Գազայի գոտու նոր բնակավայրերը: Գազան, ըստ աշխատավորական կուսակցության առաջնորդ Շիմոն Պերեսի, *«արաբներով բնակեցված այնպիսի մի տարածք է, որ նույնիսկ գետինը չի երևում»*... Իր 700 հազար պաղեստինցիներով, Ռաֆայի և Խան-Յունիսի փախստականների ճամբարներով՝ այն նաև ամեն վայրկյան պայթելու պատրաստ վառոդի տակառ է: Սակայն, եթե Իսրայելի հարավում գտնվող Աշկելոնից հետո կես ժամ մեքենայով շարունակես, թողնելով պաղեստինյան ճամբարներն ու քաղաքները շրջանցող ճանապարհները, զարմացած կընկնես Նեցեր Հազանի, Աթսմոնա, Նևե Դեկալիմ... Միջերկրականի երկայնքով, արմավենիներով պատված ավազաբլուրների միջից, այստեղ-այնտեղ հառնում են կարմիր տանիքներով փոքր բնակավայրեր: Դրա՞խտ: Ոչ. սա հենց բուն Գազայի գոտին է՝ մի քանի կիլոմետր լայնությամբ և քառասուն կիլոմետր երկարությամբ: Այն կոչվում է Գուշ Կատիֆ: Հատկապես պետք չէ ճանապարհը շփոթել. կարող ես կյանքդ վտանգելով, հայտնվել Ռաֆայի թաղամասերից մեկում, ուր *Ինտիֆադայի* կոմիտեները դեռևս շատ ակտիվ են:

Մոտ տասնհինգ նոր բնակավայրեր կան Գուշ Կատիֆում, մեծ մասամբ գյուղատնտեսական փոքր գյուղեր (մոշավներ): Այժմ հազիվ 3 հազար իսրայելցի է ապրում Գուշ Կատիֆում: Սակայն, մի քանի ամիս է, այնտեղ նույնպես ծրագրերն իրականացվում են: Արիել Շարոնն անձամբ եկել է Գուշ Կատիֆ նոր ճանապարհի բացումը կատարելու, որը հնարավորություն է տալիս շրջանցել պաղեստինյան բնակավայրերը: Պատրանք ստեղծելու համար, որ հեռու են *Ինտիֆադայից*, պաղեստինյան կոնֆլիկտից, Գուշ Կատիֆի բնակիչներն այսուհետև կարող են նույնիսկ Թել-Ավիվ մեկնել ինքնաթիռով, շնորհիվ Նեվե Դեկելի մոտ կառուցված պստիկ օդանավակայանի: Իսկ մերձակայքում, ծովի ափին կառուցված հյուրանոցն արդեն ընդունում է մի քանի անվախ կամ անտեղյակ զբոսաշրջիկների:



Սակայն ինչքա՞ն կտևի այդ պատրանքը: Ի՞նչ է լինելու այն հինգ կամ տասը հազար իսրայելցիների ապագան այդ փակուղում, ուր 2000 թվականին մոտ մեկ միլիոն պաղեստինցի կապրի: Գուշ Կատիֆի նոր բնակավայրերը զարգացնելը ցնո՞րք չէ՞, կամ ավելի վատ՝ խելագարություն: Այս հարցը վերջերս տրվեց վարչապետ Իցհակ Շամիրին: *«Կարելի է մտածել, թե Իսրայելի ոչ մի վայրը անհրաժեշտ չէ, սակայն, եթե մի ժողովուրդ գտնում է, որ դա իր հայրենիքն է, իր տարածքը, նա պարտավոր է պահպանել այդ վայրերը»*, պատասխանեց նա: Նույն պատճառաբանությունն է մեջ բերվում արդարացնելու համար Հուդայի երկրի և Սամարայի (Այսրհորդանան) նոր բնակավայրերի ամրացումն ու ծավալումը, Մեծ Իսրայելի հենց սրտում, որի ստրատեգիական կարևորությունն Իսրայելի համար ավելի հեշտ է բացատրել:

Այն, ինչ խիստ համեստորեն արվում է Գազայի գոտու Գուշ Կատիֆի նոր բնակավայրերում, Այսրհորդանանում ամիսներ շարունակ իրականացվում է շատ ավելի մեծ թափով: Դժվար է ճշգրիտ թվերն իմանալ: Թերթերը ցուցակներ են տպագրում: 4 հազար բնակարան կկառուցվի Էլոն Մորեում, Նաբլուսի մոտ, 3 հազար՝ Օֆրայում, Ռամալլահի մոտ, 5 հազար՝ Շիլոհում... Սակայն այստեղ խոսքը վերաբերում է երկարաժամկետ ծրագրերին, որոնք, հենց որ իրականացվեն, Այսրհորդանանի հրեա բնակչությունը կհասցնեն կես միլիոնի: Արիել Շարոնը խոստովանում է, որ գալիք երկու տարվա ընթացքում կկառուցվեն 13 հազար բնակարանային միավորներ: Հակաբռնակցական ձախ պատգամավորները, ինչպես օրինակ Դեդի Ցուկերը, խոսում են 30 հազարի մասին:

Որոշակի է մի բան. Խ. Միությունից եկած հարյուր հազարավոր գաղթականների ժամանումից ի վեր Իսրայելում ծայր առած «բնակարանային թռիչքը» չի սահմանափակվում Գալիլեայով, Նեգևով կամ Թել-Ավիվով... Այս թռիչքը տարածվում է «կանաչ գծից»՝ 1967-ի սահմանից էլ այն կողմ, նույնիսկ եթե, ինչպես խոստացել էր Շամիրի կառավարությունը, նոր գաղթականներն իրականում չեն ուղղվելու դեպի գրավյալ տարածքների նոր բնակավայրերը: Այս պահին սոսկ մի քանի հազար հոգի են այնտեղ ապրում: Սակայն ոչինչ չի խանգարում, որ ապագայում նրանք հաստատվեն Արիելում, Ալֆե-Մենաշեում կամ էլ Մաալե Ադումիմում... Սրանք սնկի նման բուսնող նոր քաղաքներ են, որ կես ժամվա հեռավորության վրա են գտնվում Թել-Ավիվից, կամ Երուսաղեմից: Այս քաղաքները գայթակղության մեծ բևեռներ են ոչ միայն գյուղատնտեսական տարածքներ երազող վերաբնակիչների, կամ էլ «Մեծ Իսրայելի» «կրոնական մոլեռանդների» համար, այլ բոլոր նրանց, ովքեր ուզում են մատչելի գնով ձեռք բերել բնակարան կամ առանձնատուն:

Դրանից հետո ի՞նչ կարող է անել Ջեյմս Բեյքերը: Իմաստ ունի՞ նոր բնակավայրերի «առկախում» պահանջել, երբ ամեն ինչ այսպիսի թափով է ընթանում: Ամերիկացիները և արևմտյան այլ երկրներ կարծում են, որ դա դեռևս հնարավոր է: Իսրայելցիների մեծամասնությունը դրան չի հավատում: Նույնիսկ Շիմոն Պերեսի աշխատանքային կուսակցությունը, թվում է, հաշտվել է: Լոկ ձախ մի քանի անձնավորություններ, ինչպես պատգամավորներ Դեդի Ցուկերը և Հաիմ Օրոնն են շարունակում պայքարը: Սրանք հրապարակում են հաշվետվություններ, բացահայտում ծրագրեր... խոստովանելով սակայն, թե «մենք Դոն Կիխոտներ ենք»:

ՄԱՐԻ [illegible]

«Լը Պուեն», 26 հուլիս 1991

ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Իսրայելի «պճնասերները» բռնագրավյալ տարածքներում

«Մոշե Դայանից հետո մեծագույն ռազմական միտք» հորջորջվող Իսրայելի պաշտպանության բանակի (ԻՊԲ) նորընտիր հրամանատար գեներալ Էհուդ Բարաքը վերջերս չորս կողմից խիստ քննադատության ենթարկվեց: Նրան գլխավորապես մեղադրում էին այն անզգույշ քայլի համար, որով նա թույլատրել էր հեռուստատեսային եթեր բաց թողնել այնպիսի մի հաղորդում, որը բացահայտում էր բռնագրավյալ տարածքներում պաղեստինցիների դեմ տարվող իսրայելական ընդհատակյա գործողությունները: Այդ հաղորդման մեջ իսրայելցի զինվորը՝ արաբ կնոջ հագուստներով ծպտված և շրջազգեստով, դիմափոշով ու զարդեղեններով պճնված, մոտենում է ձերբակալելու պաղեստինցի մարտիկներին: Հեռուստադիտողներից մի քանիսը նույնիսկ, կատակելով, ԻՊԲ սկզբնատառերի համար նոր մեկնաբանություն էին հորինել՝ Իսրայելի Պճնասերների Բանակ:

Բայց հարցը շատ ավելի լուրջ էր ռազմական տեսակետից: Սպաներից և քաղաքագետներից շատերը զայրացած էին՝ բանակի գաղտնի գործողությունների աննախադեպ բացահայտման փաստի առաջ գտնվելով: Իսկ պաղեստինցիներն այդ հաղորդումը սկսեցին օգտագործել որպես ապացույց, ցույց տալու համար, թե ինչպիսի գործողություններ էին առաջ տանում Իսրայելի «օպերատիվ խմբերը» Ինտիֆադայի ղեկավարների դեմ:

Երբ անցյալ ապրիլին Բարաքը դարձավ բանակի հրամանատար, նա որոշեց կրճատել զինծառայողների կազմը՝ հատկապես բռնագրավյալ տարածքներում: Բայց որքա՞ն էր արդարացված արդյոք հեռուստատեսային հաղորդումը թույլատրելու նրա այն քայլը, որով հանրության սեփականություն էին դառնում բանակի գաղտնի գործողությունները: Կնեսեթի անդամ Յեհոշուա Սագին, որը նախկինում ռազմական հետախուզության հրամանատար էր եղել, այդ քայլն անվանեց «աննախադեպ սկանդալ», որն ընդհատակյա ռազմական ծրագիրն ամբողջությամբ դնում էր հարցականի տակ: Բարաքը, սակայն, դա անհեթեթություն համարեց, ասելով, որ հակառակորդի կողմը ծպտյալ թափանցելը չափազանց հնացած ձև է: Նա ինքն էլ մի ժամանակ, որպես ծպտված կին, Բեյրութում մասնակցել էր Պաղեստինի Ազատագրական կազմակերպության երեք սպաների սպանության գործին: Նրա կարծիքով, հաղորդումն, ընդհակառակը, պաղեստինցի ակտիվիստներին ավելի աչալուրջ էր պահելու և ստիպելու էր նրանց կասկածել արաբի տարազներով յուրաքանչյուր անցորդի: Դա իր հերթին առաջ էր բերելու անվստահություն մեկը մյուսի հանդեպ:

Այնպես որ, ինչպես տեսնում ենք, «բաժանիր, որ տիրես» նախկին ստրատեգիական միջոցառումը տակավին կենսունակ է:

Անցյալ շաբաթ Բարաքի և կառավարության միջև տարաձայնությունները խիստ սաստկացան: Վարչապետ Իցհակ Շամիրը զայրացած էր, որ հեռուստահաղորդման հարցի շուրջ Բարաքը չէր խորհրդակցել պաշտպանության նախարար Մոշե Արենսի հետ:

Ելույթ ունենալով Կնեսեթի առաջ, Բարաքը մի քանի պատճառներ նշեց հաղորդումը եթեր արձակելու իր թույլտվության վերաբերյալ: Նա ցանկանում էր հասարակությանը տեղյակ պահել այն հնացած միջոցներին, որոնցով բանակը պայքարում էր *Ինտիֆադայի* դեմ: Նրա նպատակը բանակի ընդհանուր բարոյական վիճակը բարձրացնելն էր: *«Նրանք ծառայում են ծանր, երբեմն նվաստացուցիչ պայմաններում, և լավ է, որ իմանան, թե իրենց թիկունքում կանոնավոր և պրոֆեսիոնալ բանակ կա կանգնած, ոչ թե «պճնասերների մի խմբակ»,–* փորձեց արդարանալ նա:

Սակայն ամենից ավելի Բարաքը ցանկանում էր նվազեցնել զինծառայողների քանակը բռնագրավյալ տարածքներում: Ինչպես հեռուստահաղորդման մեջ մի զինվոր նշում էր, *«այդ աշխատանքը մի քանի լավ մարզված տղաների գործն է: Կարիք չկա ամբողջ գումարտակ պահել այնտեղ դրա համար»*:

Պաղեստինյան Մարդու իրավունքների լրատվական կենտրոնի հաղորդումների համաձայն, 47 արաբ է սպանվել Իսրայելի ընդհատակյա ջոկատի զինվորների ձեռքով:

Այս տեղեկություններին միացավ նաև Իսրայելի Մարդու իրավունքների պաշտպանության հանձնախմբից՝ Բեթսելեմը, նշելով, որ այդ ջոկատի անդամները հավանաբար սպանել էին նաև *«Սև հովազ»* կոչված զինված դիմադրական շարժման երեքից հինգ անդամների, առանց նախօրոք ըզգուշացնելու, որ հանձնվեն:

Այնուհանդերձ, անցյալ շաբաթ ԻՊԲ-ի ներկայացուցիչը կտրականապես մերժեց ներկայացված բոլոր տեսակի մեղադրանքները՝ «բացարձակապես անհիմն» որակելով դրանք, սակայն հրաժարվեց յուրաքանչյուր մեղադրանք առանձին քննարկելու պատասխանատվությունից:

Վճռական փոփոխություններ մտցնելու Բարաքի հաստատակամությունը կարող է հույսեր արթնացնել որոշ պաղեստինցիների մեջ: Միգուցե նա կարողանա բանակին ետ պահել այսուհետև կիրառելու «երկաթյա բռունցքի» այն քաղաքականությունը, որ ցարդ գործադրվել է արաբների դեմ Արևմտյան ափի և Գազայի տարածքներում: Այդ քաղաքականության մաս են կազմել երկարատև պարետային ժամերը, զանգվածային ձերբակալությունները և արաբների միջից «համագործակցող ընկերների» ձեռք բերումը:

Այնուամենայնիվ, սա բոլորովին չի նշանակում, թե զորքերը կարող են դուրս բերվել այդ տարածքներից մոտ ապագայում: Ինչպես վարչապետ Շամիրը վերջերս նշեց իր ամենավճռական ելույթներից մեկում, *«այդ տարածքները Իսրայելի պետության անքակտելի մասն են կազմում: Մենք ցանկանում ենք, որ արաբական երկրները ընդունեն այդ փաստը»*:

Այնպես որ, Բարաքի զորքերը դեռ երկար ժամանակ ստիպված են ծառայել այդ շրջաններում:

ԹԵՈԴՈՐ ՍՏԵՅՆՋԸՐ

Newsweek, հուլիսի 8, 1991

«Խ. Միության հրեաները վտանգի տակ են»

Նեոնացիստական ցույցերը Գերմանիայում և հակասեմիտիզմի վերածննդի նշանները Եվրոպայում խիստ անհանգստացնում են իսրայելցիներին: Դրանցից է Շլոմո Հիլելը, նախկին նախարար, որ քառասուն տարի առաջ կազմակերպեց Իրաքի 150 հազար հրեաների հաջողակ փրկության գործողությունը (դրա մասին նա պատմում էր իր «Արևելքի քամին» գրքում):

Շլոմո Հիլել. Չգիտեմ, թե մինչև ուր կարող է հասնել սա, սակայն չպետք է կրկնել անցյալի սխալները, նվազեցնելով հակասեմիտիզմի սրման նշանները: Ամեն դեպքում, վերջին տարիների իրադարձությունները ապացուցում են, որ նույնիսկ Իսրայելում երկար ժամանակ հնացած համարվող 1897 թ. Բազելի կոնգրեսում ձևակերպված սիոնիզմի սահմանումը այսօր առավել քան երբևէ ուժի մեջ է. Իսրայելում ապաստան ստեղծել հրեա ժողովրդի համար:

Լը Պուեն. **Սակայն ԽՍՀՄ հրեաների արտահոսքով և ֆալաշների (եթովպական հրեաների) Իսրայել տեղափոխմամբ չի՞ ավարտվում, արդյոք, Իսրայելի փրկության առաքելությունը:**

Բոլորովին էլ ոչ: Ես չեմ խոսում միայն արաբական երկրներում, ասենք Սիրիայում կամ Եմենում պատանդ պահված հրեական փոքր համայնքների մասին: Սակայն, Խ. Միությունում հրեաների արտահոսքը նոր-նոր է սկսել: Պետք է դա արագացնել, քանզի, իմ կարծիքով, խորհրդային հրեաներին լուրջ վտանգ է սպառնում ասիական մասում, իր մուսուլմանական ինտեգրիստ բնակչությամբ:

Իսրայելը կարո՞ղ է ընդունել հազարավոր գաղթականների:

Իհարկե, իսկական դժվարություններ կլինեն, ցույցեր, գործազրկություն... Սակայն, այն չափով, որ այսօր հնարավոր չէ պատկերացնել Իսրայելն առանց 50-ական թվականներին Իրաքից ու Մարոկկոյից եկած հրեաների, համոզված եմ, որ 2000 թվականին էլ հնարավոր չի լինի Իսրայելը պատկերացնել առանց խորհրդային և եթովպական հրեաների:

«Լը Պուեն», 26 հուլիս 1991

Գորբաչովը կապիտալի ուղու վրա

Յոթը այսուհետեւ 7+1 է: Լոնդոնում Գորբաչովին ընդունելը նոր իրադրություն է ստեղծել եւ նպաստել, որ հարուստ երկրների գագաթնաժողովն առավել քաղաքականացվի: Լոնդոնյան հանդիպման մասին իր մեկնաբանությունն է տալիս ֆրանսիական «Լը Պուեն» շաբաթաթերթն իր հուլիս 26-ի համարում: Այն արտատպում ենք թարգմանաբար, որոշ կրճատումներով:

Միխայիլ Գորբաչովը, լքելով ոսկեղաս ու արծաթազօծ Կրեմլը, ուր յոթանասուն տարի շարունակ իրար էին հաջորդել կոմունիստական ցարերը՝ Լենինը, Ստալինը, Խրուշչովը, Բրեժնեւը եւ այլք, հանդիպեց կապիտալիստական յոթ առաջնակարգ տերությունների ամենաբարձր պատասխանատուներին եւ ասաց. *«Բաստա: Մարտը դադարեցնում ենք: Այսուհետեւ ձեզ հետ, ձեր կանոններով ենք ուզում խաղալ...»:* Սա ոչ թե խորհրդանշական, ինչպես նշեց Բրիտանիայի վարչապետը, այլ պատմական շրջադարձ էր: Ի՞նչ կարելի է արձանագրել յոթ մեծերի այս գագաթնաժողովից: Ընդհանուր գծերով կարելի է նշել երեք բան. Խ. Միությունը մտել է ներառնվի համաշխարհային տնտեսական ինտեգրացիայի ընթացքի մեջ, յոթ մեծերի տարեկան համախմբումը գնալով ավելի քաղաքական բնույթ է ստանում, Ֆրանսիան ներքում է համաշխարհային այս դիրեկտորիան եւ ավելի ու ավելի խախուտ դրության մեջ ընկնում:

Գորբաչովի մրցասպարեզ իջնելը նշանավորվեց ստրատեգիական զենքերի կրճատման շուրջը մեծ առեւտրով, որ մինչ այդ սկսվել էր Վաշինգտոնում, երկու արտգործնախարարների՝ Ջեյմս Բեյքերի եւ Ալեքսանդր Բեսսմերտնիխի միջեւ, այնուհետեւ կնքվել Լոնդոնում՝ նախագահներ Բուշի եւ Գորբաչովի կողմից: Երկուսն էլ պետք է պաշտոնապես այն հաստատեն այս ամսվա վերջերին, Մոսկվայում: Այս կարեւոր հաջողությունը պսակում է տասը տարի առաջ սկսած բանակցությունները եւ թույլ կտա 25-30 տոկոսով կրճատել ռազմական երկու գերտերությունների ստրատեգիական զենքերը: Սակայն մոլորակը պայթեցնելու համար երկուսին էլ դեռեւս շատ բան կմնա:

Խ. Միությանը յոթ մեծերի օգնության վերաբերյալ առեւտուրն ավելի համեստ եղավ: Այն ավարտվեց ավելի շուտ փոխադարձ խոստումներով, քան նվերներով: Դյուրըմբռնելի անհավասարակշռություն. խաղը ամերիկացիների ձեռքում է, ոչ թե Մոսկվայի: Շատ ամերիկացիների համար Խ. Միությունը մնում է դեռեւս հրեշ: Առավել եւս, որ նրա, թեեւ նվազեցված, ռազմական բյուջեն դեռեւս նշանակալի է: Վերջապես, ամենաբարձր մակարդակի ամերիկյան ղեկավարների համար նա, որին Լոնդոնում «Գորբի» են անվանում, չի ներկայացնում այլեւս միակ խաղաքարը Մոսկվայում. Բորիս Ելցինը դրանից քիչ առաջ այցելել էր Վաշինգտոն...

Ուստի Ջորջ Բուշը շատ չէր տրամադրված դոլլարները փոխել կոպեկների հետ: Ճապոնացիներն իրենց կողմից նույնպես չէին ուզում [illegible] քսակը բանալ: Նրանց համար կրսաս-կսած էր. յենը՝ պատերազմի հաջորդ օրն իսկ Ստալինի կողմից բռնակցված Կուրիլյան կղզիների վերադարձի դիմաց: Միտերանը, Քոլը եւ Անդրեոտին իզուր էին մեծահոգության կոչեր անում՝ մշակել ընդհանուր ստրատեգիա. դրանից ոչինչ չստացվեց:

Մերժողների ճակատն այնքան էր ամուր, որ հնարավոր չէր նույնիսկ Ժակ Աթալիի նախագահած Եւրոպական բանկում Խ. Միության փոխառության իրավունքները մեծացնել:

Գորբաչովը դրանից մի փոքր հուսախաբ եղավ. չնայած հավատացել էր, թե ինքը չի եկել ձեռքը մեկնելու: Բացի այդ, հենց սկզբից էլ պարզ էր, որ դրամը չի հոսելու նրա քսակը: Յոթ մեծերին չէր համոզել տնտեսական բարեփոխումների այն ծրագիրը, որ Կրեմլը նրանց էր ուղարկել նախօրք, 23 էջանոց մի նամակով, որին կցված էր 30 էջանոց մի հավելված: Ամեն ինչ խաղացված էր, երբ Գորբաչովը հուլիսի 17-ին, չորեքշաբթի օրը, կանգնեց նրանց առաջ՝ հանձնելու համար իր «Մեծ ժառը»: Հանձնաժողովն արդեն ըստուգել էր գրավորը. «Կարող էր ավելի լավ գրել: Խրախուսել»:

Այդ խրախուսումը թվարկվում է վեց կետերով: Դրանցից կարեւորներն են. դրամական ֆոնդի եւ համաշխարհային բանկի մասնակից, ուժեղացված տեխնիկական օգնություն, Յոթ մեծերի գագաթնաժողովի նախագահ Ջոն Մեյջըրի հավաստած քաղաքական «շարունակություն», վերջինս մինչեւ տարվա վերջը կայցելի Մոսկվա (Քոլը էստաֆետը կվերցնի հաջորդ տարի), վերջապես, յոթ ֆինանսների նախարարները նույնպես Մոսկվա կգնան մինչեւ տարեվերջ: Վերջին հաշվով, այս ամենը կարող է Մոսկվային տալ այն, ինչ Գորբաչովն էր պերճախոսությամբ պահանջում մամլո ասուլիսում, իր «գործընկերների» կողմից, որպես *«Խ. Միության օրգանական ներառումը համաշխարհային տնտեսության մեջ»:* Այնուհետեւ նա ավելացրեց, թե *«մենք մեզ մի փոքր մեկուսացված ենք զգում...»:* Այս հեռանկարը, սակայն, կախված կլինի խորհրդային հանրապետությունների հետ Մոսկվայի կապերից: Մինչեւ միութենական պայմանագիրը չկնքվի, յոթ մեծերը կմնան կասկածոտ: Գորբաչովը վստահեցրեց իր զրուցակիցներին, որ իր կողմից ինքն այն կստորագրի միայն այն ժամանակ, երբ պաշտպանությունը, արտաքին քաղաքականությունը, մաքսային համակարգը եւ դրամը մնան ֆեդերալ հարկերով ամրակայված ֆեդերացիայի ձեռքում:

Յոթ մեծերի գագաթնաժողով. Բուշը բաժանվում է Գորբաչովից

Ալժիրը փորձում է շտկվել

Սխալ են Ալժիրի վարչապետ Սիդ Ահմեդ Ղոզալիի հավաստիացումներն այն մասին, թե երկրները չեն կարող «քիչ ժողովրդավարական» լինել: Ի տարբերություն հղիության, ժողովրդավարությունը հազվադեպ է, որ միանգամից է առաջ գալիս: Այն աստիճանաբար է մուտք գործում երկիր: Այժմ, երբ Ալժիրի հիմնական բարեփոխումների ծրագիրը հօդս է ցնդել, կառավարությունը հույս ունի գոնե միջանկյալ զիջումներով բավարարել իր քվեարկողների պահանջները:

Բանակային տանկերն այս շաբաթ դուրս բերվեցին երկրի շատ շրջաններից, բայց նրանք այնուամենայնիվ, շատ հեռու չեն մեկնել: Խոսակցություն կա, որ շրջափակումը դադարեցվի նախքան չորս ամսվա սահմանված ժամկետի ավարտը: Իսլամական Փրկության Ճակատը (ԻՓՃ), որի ղեկավարներից շատերն այժմ բանտարկված են, հասկանալիորեն «զենքերը ցած է դրել»: Նրա առաջնորդն ու առաջնորդի փոխանորդը ձերբակալված են պետության դեմ զինված ապստամբությունը ղեկավարելու մեղադրանքով եւ շուտով կկանգնեն դատարանի առաջ: Բանակը հուլիսի 7-ին Մոհամմեդ Սաիդ անունով մի քարոզչի եւս ձերբակալեց. նա համարձակվել էր մամլո ասուլիս հրավիրել եւ հայտարարել, որ կուսակցությունն իբր իրեն առաջնորդի պաշտոնակատար է նշանակել: Իրականում նա փորձում էր զգուշացնել համախոհներին: Պաշտոնական տվյալներով ավելի քան 6 հազար հոգի են ձերբակալված, այդ թվում նաեւ օտարերկրացիներ: Ըստ երեւույթին գաղտնի զինապահեստների մասին տեղեկություններ էին տրդել:

Ղոզալին նշում է, որ չնայած իսլամ արմատականների ցույցերի հետեւանքով 5 շաբաթ առաջ երկրում արտակարգ դրություն հայտարարվեց եւ խորհրդարանի ընտրություններն անժամկետ հետաձգվեցին, այնուամենայնիվ, ԻՓՃ-ի անդամներին հետագայում այդ ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկելու հարց չի դրված: Կառավարող Ազգային Ազատագրական Ճակատի (ԱԱՃ) եւ մյուս, համեմատաբար փոքր կուսակցությունների ներկայացուցիչների հետ միասին, այդ կուսակցության անդամները հրավիրվելու են կազմելու մի հանձնախումբ, որը քննարկելու է ընտրական օրենքի վերափոխման հարցը: Սակայն ԻՓՃ-ն իր ներկա կազմով հազիվ թե համաձայնի մասնակցել այդպիսի քննարկմանը, նախ՝ կուսակցությունը մասնատված է տակտիկական հարցերի շուրջ ծագած մի շարք տարաձայնությունների հետեւանքով, երկրորդ՝ նրա ղեկավարներն այժմ բանտարկված են: Այնպես որ, լավագույն դեպքում այդ խմբակցությունը կարող է պարզապես ետ քաշվել եւ բոյկոտի ենթարկել հանձնախմբի գործունեությունը: Իհարկե, առանց նրա մասնակցության էլ ընտրությունները կարող են անցկացվել, բայց կըխախտվեն ժողովրդավարության կանոնները, քանի որ մյուս կուսակցություններն այնքան փոքր են, որ վճռական ազդեցություն չեն կարող ունենալ ընտրությունների արդյունքների վրա:

Վարչապետը, որը ֆրանսիական կրթություն ստացած մի փայլուն ինժեներ է, փորձում է իրեն հեռու պահել մի կողմից իր մենատիրական կուսակցությունից, եւ մյուս կողմից՝ այն գեներալներից, որոնք այժմ ղեկավարում են երկրի ներքին գործերը: Նա բաց գիտակցում է, որ ժողովրդավարական երկիր դառնալու հույսերն ամբողջովին կախված են տնտեսության լավ կամ վատ վիճակից: *«Իսլամ արմատականները մեծապես կարողանում են օգտվել երկրում տիրող հուսալքության եւ անորոշության վիճակից»,-* ասաց նա անցյալ շաբաթ, խորհրդարանում:

Վարչապետի ամենամեծ դժվարությունը այդ վիճակի դեմ պայքարելու համապատասխան նյութական միջոցների պակասն է: Երկրում գործազուրկների թիվը կազմում է բնակչության քսան տոկոսը: Նա օգնության խնդրանքով դիմել է Համաշխարհային Բանկին եւ Եւրոպական Շուկայի երկրներին: Վերջիններս այժմ մտածում են 570 միլիոն դոլլարի վարկ բաց թողնել Ալժիրի կառավարության խնդրած 900 միլիոն դոլլարի փոխարեն:

The Economist,
հուլիսի 13, 1991

ՄԱՐԶԱԿԱՆ



«Արարատ»ը խաղալու է առանց հանդիսականների

Կենտրոնական լրատվական գրեթե բոլոր աղբյուրներն անդրադարձան հուլիսի 19-ին «Հրազդան» մարզադաշտում «Արարատ»-ԲԿՄԱ հանդիպումից հետո տեղի ունեցած տխուր իրադարձություններին: Արդեն շատերին հայտնի է, որ համամիութենական ֆեդերացիայի կարգապահական հանձնաժողովն էլ քննարկել է հիշյալ հարցը, որին մեր հանրապետությունից մասնակցել են «Արարատ» ֆուտբոլային ակումբի նախագահ Կարեն Փահլեւանյանը, հանրապետական սպորտկոմիտեի ֆուտբոլի վարչության պետ Նիկոլայ Ղազարյանը եւ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահության անդամ Հրանտ Բաղդասարյանը:

Ստորեւ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում մեր հարցազրույցը նրանցից մեկի՝ Նիկոլայ Ղազարյանի հետ:

- Ինչքան գիտեմ, երեքդ էլ հանդես եք եկել նիստում: Ի պաշտպանություն «Արարատ»-ի եւ «Հրազդան» մարզադաշտը որակազրկումից փրկելու համար, որպես արդարացում ի՞նչ փաստարկներ եք բերել:

- Արդարացման մասին խոսք լինել չէր կարող: Երեքս էլ ընդունեցինք մեղավորությունը եւ խնդրեցինք ներողամիտ լինել: Հարցն այլ էր, կատարվածը չկապել ազգի հետ: Մանավանդ, որ ոմանք հակված էին դեպքերին քաղաքական երանգ տալ: Օրինակ, իմ ելույթի ժամանակ տեղից ռեպլիկ հնչեց, թե Հայաստանում անիշխանություն է եւ կատարվածը դրա հետեւանքն է: Ես ընդդիմախոսեցի, ասելով, որ նման դեպքեր այլ տեղեր նույնպես բազմիցս եղել են: Երեւանյան իրադարձություններն էլ խուլիգանական դրսեւորումներ են, ոչ ավելին: Օրինակ բերեցի 1989 թ. Կիեւում «Դինամո» - «Սպարտակ», այս տարի Դոնեցկում «Շախտյոր» - ԲԿՄԱ հանդիպումներից հետո տեղի ունեցած անկարգությունները:

Կարծիք եղավ նաեւ, թե Հայաստանում բանակի դեմ ընդհանուր դժգոհություն կա եւ դա էլ իր ազդեցությունն է ունեցել:

Ես ասացի, որ մենք բանակայիններին ընդունել ենք մեր ազգին հատուկ հյուրասիրությամբ: Օրինակ, փոխարինողները հանդիպումից կես ժամ առաջ էին Երեւան ժամանել եւ խնդրեցին խաղավիճակը մեկ ժամով հետաձգել: Մենք նրանց ընդառաջ գնացինք եւ հանդիպումը սկսվեց ոչ թե մեկ, այլ գրեթե 2 ժամ ուշ, մի բան, որ ըստ մրցակարգի կարող էինք չանել: Հետո էլ, քանի որ խաղն ուշ ավարտվեց, մենք Զորաղբյուրում ապահովեցինք բանակայինների ընթրիքը, նրանց հետ աղ ու հաց կիսեցինք: Այդ ամենն իր ելույթում հաստատեց ԲԿՄԱ-ի պետ Վ. Մուրաշկոն: Մենք խնդրեցինք չզրկել «Հրազդան» մարզադաշտը, հնարավորություն տալ ապացուցելու, որ այլեւս նման բաներ չեն կրկնվի: Առաջարկեցի մեր ֆեդերացիայի որոշումը թողնել ուժի մեջ, այն է՝ ակումբին տուգանել 20 հազար ռուբլով, որը նախատեսվում է առաջնության կանոնադրությամբ: Թվում էր մեր ելույթներից հետո շատերը փափկել են. սակայն մրցավար Բեզուբյակի ելույթից հետո ամեն ինչ կտրուկ փոխվեց: Մինչ այդ նա հանդես էր եկել Լենինգրադի հեռուստատեսությամբ եւ մանրամասն պատմել, թե իրեն ինչպես են ծեծել, ոչ միայն թունելում, այլեւ մրցավարական սենյակում: Հաղորդումը դիտել են նաեւ մոսկովյան ծրագրով: Բացի այդ, նիստից առաջ բոլորիս ուշադրությանը ներկայացվեց ԲԿՄԱ-ի օպերատորի նկարահանած ժապավենը, որից պարզորոշ երեւում էր, թե ինչպես են հարվածում ԲԿՄԱ-ի գլխավոր մարզիչ Պ. Սադիրինին: Ճիշտ է, [illegible] էին թիկունքից:

- Գլխավոր մրցավար Տ. Բեզուբյակը պնդում է, որ իրեն առաջինը մարմնական վնասվածք են հասցրել «Արարատ»-ի պետ Ս. Սիրականյանը եւ մարզիչ Ա. Աբրահամյանը, որի կապակցությամբ նա դիմել է ԽՍՀՄ գլխավոր դատախազին՝ քրեական գործ հարուցելու վերջիններիս դեմ, իսկ մեր հանրապետության ֆեդերացիայի ընդլայնված նիստում երկուսն էլ հայտարարեցին, թե այդպիսի բան չի եղել: Այդ դեպքում, քանի դեռ ոչինչ չի պարզվել, ինչո՞վ է առաջնորդվել կարգապահական հանձնաժողովը, որ վճիռ է կայացրել աշխատանքից ազատել Ս. Սիրականյանին եւ Ա. Աբրահամյանին:

- Ծեծելու փաստը միայն հետաքննությունը կարող է պարզել, իսկ պատիժը կայացվել է «Արարատ» թիմի խաղացողների հետ դաստիարակչական անբավարար աշխատանքի համար:

- Եւ վերջին հարցը. «Հրազդան» մարզադաշտը զրկվել է մեկ ամսով: Այդ ընթացքում որտե՞ղ է իր հանդիպումներն անցկացնելու «Արարատ»-ը:

- Սկզբում նախատեսվում էր առաջիկա 3 հանդիպումները կազմակերպել Կապանում, բայց հետո պարզվեց, որ անհաղթահարելի բարդություններ կան կապված թիմերի ընդունելության հետ:

«Արարատ»-ը իր խաղերն անցկացնելու է Աբովյանի քաղաքային մարզադաշտում, առանց հանդիսականների:

[illegible] ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«Անձնագրային ռեժիմի ստուգումը կդադարեցվի միայն վերջին հայ գրոհայինի հեռանալուց հետո»

Ադրբեջանի նախագահի օգնական Օսման Միրզոեւը «ԻՖ»-ի թղթակցին տված հարցազրույցում հաղորդեց, որ հանրապետության նախագահ Այազ Մութալիբովի եւ Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հանդիպման ժամանակ, որը Լեւոն Տեր-Պետրոսյանի խնդրանքով տեղի էր ունեցել անցյալ երեքշաբթի Նովո-Օգարյովոյում, քննարկվել է Լեռնային Ղարաբաղում անձնագրային ռեժիմի ստուգումը դադարեցնելու հարցը:

«Ադրբեջանական կողմը հայտարարեց,– հաղորդեց Օ. Միրզոեւը,– *որ գործողությունները կարող են դադարեցվել միայն այն դեպքում, երբ Հայաստանը կապահովի վերջին գրոհայինի հեռացումը ադրբեջանական տարածքից, ինչպես նաեւ չեղյալ կհամարվեն ԼՂԻՄ-ի վերաբերյալ Հայաստանի խորհրդարանի ընդունած բոլոր որոշումները»:*

Օ. Միրզոեւը հերքեց զանգվածային տեղեկատվության մի շարք միջոցների հաղորդագրությունները, որոնց համաձայն նախագահ Այազ Մութալիբովը Կենտրոնից ցուցում է ստացել դադարեցնել անձնագրային ռեժիմի ստուգումը:

Շոշափելով հայ-ադրբեջանական բանակցություններին Վրաստանի հավանական միջնորդության հարցը՝ Օ. Միրզոեւը նշեց, որ բանակցությունները իրականություն չեն դառնա, քանի դեռ մի կողմը տարածքային պահանջներ է ներկայացնում մյուս կողմին: «*Երրորդ կողմի մասնակցությունն ամենեւին էլ պարտադիր չէ*»,– ասաց նա:

Մինչդեռ, երկուշաբթի, Երեւանում կայացած բրիֆինգի ժամանակ Հայաստանի նախարարների խորհրդին կից պաշտպանության կոմիտեի նախագահ Վահան Շիրխանյանն ասաց, որ ԽՍՀՄ եւ Ռուսաստանի Գերագույն խորհուրդների մի խումբ պատգամավորների ժամանելուց հետո, ամենայն հավանականությամբ, վերջապես կկայանան բանակցություններ ադրբեջանական կողմի հետ:

Բրիֆինգի ընթացքում նա նշեց, որ «*հայկական կողմի բանակցություններ վարելու պատրաստակամությունը ոչ մի արձագանք չի գտնում ադրբեջանական կողմում: Երբ իրավիճակը Շահումյանի շրջանում եւ Լեռնային Ղարաբաղում հետագայում սրվի, ապա բացառված չէ, որ Հայաստանի կառավարության հաջորդ քայլը կարող է լինել ընդհանուր զորահավաքը*»:

Այս տարի զոհերի թիվը Լեռնային Ղարաբաղում երկու անգամ ավելի է, քան անցյալ տարի

Երբ անցյալ տարի ԼՂԻՄ-ում սպանվել են 57 մարդ, ապա այս տարվա 6 ամիսների ընթացքում՝ երկու անգամ ավելի՝ 122 մարդ, այդ թվում՝ կանայք, երեխաներ, ծերունիներ: Իր զեկուցման մեջ այս փաստերը բերեց Ադրբեջանի գլխավոր դատախազ Իսմեթ Գայիբովը՝ Բաքվում կայացած հանրապետության դատախազության կոլեգիայի ընդլայնված նիստում:

36 հազար գործազուրկ՝ Սումգայիթում

Ադրբեջանի «Հայելի» շաբաթաթերթը հաղորդեց, որ Սումգայիթում 36 հազարից ավելի գործազուրկ կա: Վկայակոչելով Բունիաթ Ահմեդովին՝ Սումգայիթի զբաղվածության կենտրոնի տնօրենին, թերթը գրում է, որ շուտով ավելորդ մարդկանց քանակը կաճի եւ կհասնի 42 հազարի:

Նշում են, որ Սումգայիթի բնակիչները գերադասում են մնալ գործազուրկ, բայց չեն գնում աշխատելու վնասակար արտադրություններում, որոնցով «հարուստ» է երկրի էկոլոգիապես այդ ամենաանբարենպաստ քաղաքներից մեկը:

Ադրբեջանի նախագահին ընդունեց ԽՍՀՄ-ում Իրանի դեսպանին

Հուլիսի 29-ին Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովն ընդունեց ԽՍՀՄ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Նեյմաթուլլա Իզեդիին:

Ինչպես հաղորդեցին «ԻՖ» թղթակցին Ադրբեջանի ԱԳՆ մամլո կենտրոնում, Ա. Մութալիբովը ծանոթացրեց հյուրին հանրապետության սոցիալ-քաղաքական կյանքի հետ, պատմեց ԼՂԻՄ-ում եւ հայ-ադրբեջանական սահմանում ստեղծված իրավիճակի մասին:

Երկու կողմերն էլ գոհունակությամբ նշեցին, որ վերջին ժամանակներս աշխուժացել են շփումները Իրանի եւ Ադրբեջանի միջեւ: Իրանի դեսպանը Մութալիբովին հանձնեց Թեհրան այցելելու Իրանի կառավարության հրավերը:

Զրույցի ընթացքում քննարկվեցին Բաքվում իրանական հյուպատոսարանի գործունեության հարցերը: ■

Իրան-Պակիստան-Թուրքիա տնտեսական համագործակցության կազմակերպության նիստը առանց Թուրքիայի

Հուլիսի 28-ին Թեհրանում իր աշխատանքըն սկսեց Իրանի եւ Պակիստանի տնտեսական միացյալ հանձնաժողովի 6-րդ նստաշրջանը, որին մասնակցում էին երկու երկրների տնտեսության, ֆինանսների եւ նավթի նախարարները: Նստաշրջանում քննարկման է դրվել Իրան-Պակիստան–Թուրքիա տնտեսական համագործակցության կազմակերպության՝ ECO-ի դերի բարձրացման հարցը: Ըստ իսլամական հանրապետության պաշտոնական հաղորդագրությունների, Իրանի տնտեսության եւ ֆինանսների նախարար Մոհսեն Նուրբախշը հանձնաժողովի կիրակնօրյա նիստի ժամանակ նշել է, թե ECO-ն եւրոպական երկրների շրջանային համագործակցությանը հավասարազոր կազմակերպություն կարելի է համարել: Նախարար Նուրբախշը, անդրադառնալով Իրանի եւ Պակիստանի միջեւ տնտեսական համագործակցության հարաճուն գործընթացին, նշել է, որ անցյալ տարվա ընթացքում Իրանն ավելի քան 46 միլիոն դոլարի ապրանք է ներմուծել Պակիստանից, իսկ Պակիստանը, նույն ժամանակահատվածում, Իրանից ստացել է 182 միլիոն դոլարից ավելի ապրանք: Պակիստանի տնտեսության եւ ֆինանսների նախարար Սարթաջ Ազիզը, խոսելով իր երկրի տնտեսական կարողությունների մասին, բարձր է գնահատել ECO-ի շրջանակներում երկու երկրների համագործակցությունը: Իրանի նավթի նախարար Աղազադեի եւ Պակիստանի նավթի ու բնական պաշարների նախարար Ալիխանի հանդիպման ժամանակ, քննարկվել են Պակիստանի համատեղ միջոցներով կառուցվող նավթամշակման կոմբինատի եւ Իրանից նավթի ու գազի արտահանման վերաբերյալ հարցերը:

Հարկ է նշել, որ վերջին երկու ամիսների ընթացքում ECO-ն գումարում է հերթական 6-րդ նստաշրջանը, սակայն այս անգամ նստաշրջանին չեն մասնակցում կազմակերպության մյուս, երրորդ անդամ պետության՝ Թուրքիայի ներկայացուցիչները: Հիշեցնում ենք, որ Խ. Ադրբեջանի վարչապետ Հ. Հասանովը հունիս ամսին Իրան կատարած այցելության ժամանակ իր հանրապետության անունից ցանկություն էր հայտնել անդամագրվելու այդ կազմակերպությանը: Այդ ժամանակ Իրանի արտգործնախարար Վելայաթին խոստացել էր այդ հարցը քննարկման դնել մյուս անդամ պետությունների հետ կայանալիք խորհրդակցության ժամանակ: Այդ պահից անցել է ավելի քան երկու ամիս, սակայն Խ. Ադրբեջանի անդամակցության մասին դեռեւս չկա որեւէ արձագանք:

Իրանի եւ Պակիստանի տնտեսական միացյալ հանձնաժողովի 6-րդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը, իսլամական հանրապետության արտգործնախարար Վելայաթին Իսլամաբադի կառավարության բարձրաստիճան պատասխանատուների հետ աֆղանական հարցի քննարկման նպատակով ուղեւորվեց Պակիստան: Ըստ Իրանի պաշտոնական հաղորդագրությունների, պրն. Վելայաթին, որ գլխավորում է բարձրաստիճան պետական մի հանձնախումբ, բանակցությունների ընթացքում քննարկել է երկու երկրներին հետաքրքրող հարցերը: Չնայած հաղորդագրության մեջ նշված չեն քննարկվող հարցերի շրջանակները, սակայն Իրանի ռադիոն նախապես հաղորդել էր, թե իսլամական հանրապետությունը Պակիստանի եւ Իրանի սահմանամերձ գոտում զինված կազմավորումներին ճնշելու համար մտադիր է հայցել Իսլամաբադի օգնությունը: Իսրայելի ռադիոն, վկայակոչելով ոչ հավաստի աղբյուրները, նշել է, թե Իրանի իսլամական հանրապետությունը մտադիր է Պակիստանի օգնությամբ միջուկային զենք արտադրել:

Գ. ՍԱՐԳՍԵԱՆ

Թուրք-մեսխեթների «Խաղաղ արշավը» չկայացավ

Թուրք-մեսխեթների կողմից հայտարարված Տուապսեից դեպի Վրաստան «Խաղաղ արշավը» չկայացավ: Գործողության մասնակիցները ծրագրում էին Վրաստանի քաղաքներում անցկացնել հանրահավաքներ եւ հանդիպումներ, փոխըմբռնման հասնել տեղացի բնակչության հետ:

«Խաղաղ արշավի» փոխարեն Լեսելիձե ավանում, Վրաստանի եւ Ռուսաստանի սահմանում, տեղի ունեցավ հանրահավաք, որը կազմակերպել էր վրաց բնակչությունը: Հանրահավաքում ելույթ ունեցած Աբխազիայի ՆԳ նախարար Գիվի Լոմինաձեն հավաստիացրեց ներկաներին, որ ոչ մի պատրվակով թույլ չի տա թուրք-մեսխեթների արշավը:

Թուրք-մեսխեթներին տեղահանել են Վրաստանից Ստալինի հրամանով:

Վրաստանի նախագահը մեղադրում է Կոմկուսի նախկին ղեկավարներին

Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիան, ելույթ ունենալով Թբիլիսիում կայացած հանրապետության դատախազության կոլեգիայի ընդլայնված նիստում, կարծիք հայտնեց, որ Վրաստանում վերջին ամիսների հանցագործությունների աճը պայմանավորված է «*նախկին կառավարող կոմունիստական ռեժիմի ժառանգությամբ*»: Նա մեղադրեց Վրաստանի Կոմկուսի մի շարք նախկին ղեկավարների՝ (Գիվի Գումբարիձե, Գուրամ Մգելաձե) «Մխեդրիոնի» ընդդիմադիր զինված ստորաբաժանումներ կազմակերպելու մեջ: Այդ կազմակերպությունն այժմյան վրացական իշխանությունների կողմից հայտարարվել է օրենքից դուրս, իսկ նրա ղեկավար Ջաբա Իոսելիանին կալանքի տակ է գտնվում:

Զ. Գամսախուրդիայի ելույթը ցուցադրվում էր վրացական հեռուստատեսությամբ: ■

[illegible] Պիկասոյի 12 մետրանոց մի [illegible] Ֆրանսիայի [illegible]: Այն կանգնած [illegible] է, որի մակետը Պիկասոն պատրաստել էր դեռեւս 1957-ին:

«ԽՍՀՄ-ը հեռանում է շրջանի քաղաքական թատերաբեմից»,– ասում է Ահմադ Խոմեյնին

Իրանն այն կարծիքին է հայտնում, որ Մերձավոր Արեւելքի վերաբերյալ ԱՄՆ-ի առաջարկները, հաշվի առնելով Ծոցի պատերազմի հետեւանքները, նպատակաուղղված են Իսրայելի ռազմական կարողության էլ ավելի հզորացմանը: Կիրակի օրը Ռաֆսանջանին նշեց, թե միջազգային հանրության շահերը պահանջում են, որ շրջանի խաղաղությունը վտանգի չենթարկվի: Նախագահն ավելացրեց, որ Ամերիկան ցանկանում է Ծոցի ճգնաժամն օգտագործել ի շահ Իսրայելի: Ըստ նախագահ Ռաֆսանջանիի, այդ եղանակներով հնարավոր չէ վերահաստատել անդորրը շրջանում:

Իմամ Խոմեյնիի որդի Ահմադ Խոմեյնին նույնպես այդ կապակցությամբ հայտնել է, թե ԱՄՆ-ի կողմից առաջարկված զինաթափման ծրագիրը նպաստելու է Իսրայելի դիրքերի ամրապնդմանը եւ հաստատմանը: Ըստ Ահմադ Խոմեյնիի, քանի որ Խ. Միությունը հեռանում է շրջանի քաղաքական թատերաբեմից, Մ. Նահանգները եւ Իսրայելը Մերձավոր Արեւելքում ստանձնելու են միահեծան ասպատակողների դերը: ■

Հունաստանը դժգոհում է Բուշի այցելությունից

Լոնդոնում կայացած գագաթաժողովից հետո Ջորջ Բուշը մեկնեց Հունաստան ու Թուրքիա եւ միանգամից հայտնվեց էգեյական փոթորիկում, կապված իր այն առաջարկի հետ, թե պատրաստ է օգնել լուծելու հույն-թուրքական թշնամության առարկա դարձած Կիպրոսի հարցը: Կղզին բաժանված է այն օրվանից, երբ թուրքական բանակը ներխուժեց այնտեղ 1974 թ. հուլիսին: Թուրքիան ոչ միայն հրաժարվում է ենթարկվել ՄԱԿ-ի բանաձեւին, որով նրան կոչ է արվում 30 հազարանոց բանակը դուրս հանել Կիպրոսից, այլեւ վերջին տարիների ընթացքում նույնիսկ կղզու հյուսիսային հատվածում տեղավորել է 50 հազար թուրք վերաբնակիչ:

Հունաստանի վարչապետ Կոնստանտինոս Միցոտակիսի թախանձանքով, Բուշն առաջարկեց օգնել լուծելու այս հարցը: Սակայն ԱՄՆ-ի նախագահը դիմելով Հունաստանի խորհրդարանին, նախազգուշացրեց. «Ես չեմ ցանկանում պնդել, թե ԱՄՆ-ը կարող է կախարդական փայտիկի մի հարվածով լուծել խնդիրը, որը երկար ժամանակ անհանգստացնում է աշխարհի այս մասին: Իրականում, իմ օգնականները,– ասաց Բուշը,– այս խնդիրը լուծելու ոչ մի նոր գաղափար չունեն, բացի այն բանից, որ նրանք պարզապես ցանկանում էին աջակցել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես դե Կուելյարին՝ շարունակելու բանակցությունները»:

Շատ ավելի լավ կլիներ, եթե Բուշն այդ հարցը մի կողմ թողներ: Խորհրդարանի անդամները նրա խոսքերն ընդունեցին լռությամբ: Կիպրոսի հունական մասի ղեկավարները նույնպես հիասթափված էին, քանի որ Բուշը թուրքական զորքերը դուրս հանելու մասին ՄԱԿ-ի բանաձեւի վերաբերյալ վճռական աջակցություն չարտահայտեց, ինչպես նա վարվեց Քուվեյթից Իրաքյան զորքերը հեռացնելու պարագայում: Կիպրոսի նորությունների մեկնաբանության մեջ նախագահին անվանվեց երկերեսանի:

Թուրքերն էլ ուրախ չէին, չնայած նրանք մեղադրում էին հույներին: **«Եթե Միցոտակիսը Բուշին ընդունում է որպես Թուրքիայի եւ Հունաստանի միջեւ հին վեճերը հարթեցնող կարող ուժ,**– հայտարարեց թուրք դիվանագետը,– **ապա նա լիովին սխալվում է: Ոչ Բուշը, ոչ էլ որեւէ մեկ ուրիշ երրորդ կողմ չի կարող լուծել թուրք-հունական եւ կիպրական խնդիրները»:** Հունաստան եկած ժամանակ գրեթե մոռացվել էր Բուշի [illegible] կատարած այցի բուն նպատակը, որն էր՝ շնորհակալություն հայտնել նախագահ Թուրգուտ Օզալին Ծոցի պատերազմում ցուցաբերած նրա աջակցության կապակցությամբ: ■

Հուսեյնը մեղադրում է ամերիկյան կողմին

Իրաքը նոր տվյալներ հաղորդեց իր միջուկային կարողությունների մասին: Այս բանը պատահեց նախագահ Բուշի «վերջին» զգուշացումից հետո, որով Բաղդադից պահանջվում էր ՄԱԿ-ի 18 հոգիանոց ստուգող հանձնախմբին հայթայթել անհրաժեշտ բոլոր տվյալները, այլապես սպառնալով դաշնակիցների հետ միասին մտածել ուժի գործադրության մասին:

Մյուս կողմից, Սադդամ Հուսեյնը, մի զայրացկոտ ճառ արտասանելով կիրակի օր, մեղադրեց ամերիկյան կողմին, որ մեկ տարի է շարունակելով բլոկադան, փաստորեն ուզում է պատժել «արաբական շահերը պաշտպանող» Իրաքին: ■

Բողոքի ցույցեր Սպահանում

Իրանի կանայք ամռան շոգին հրաժարվում են չադրաներից:

Թեհրանում հրատարակվող «*Սալամ*» թերթն իր հուլիսի 29-ի համարում նշում է, թե անցյալ ուրբաթ օրն Սպահանում արյունալի բախումներ են տեղի ունեցել հարյուրավոր ցուցարարների եւ ոստիկանության միջեւ: Սակայն բախումների ժամանակ վիրավորված կամ ձերբակալված մարդկանց թվի մասին թերթը ոչինչ չի հաղորդում: «Սալամ»-ում հրապարակված նյութից տեղեկանում ենք, որ անցյալ ուրբաթ օրը կանանց հագուկապին հետեւող ոստիկանները, մի խումբ օրինազանց կանանց ձերբակալելու պահին, հանդիպել են դեպքի վայրում հավաքված բազմաթիվ ցուցարարների դիմադրությանը, որի հետեւանքով տեղի են ունեցել արյունալի բախումներ: Այնուհետեւ «Սալամ»-ը նշում է, թե Սպահանի «Էնղելաբ» (հեղափոխություն) հրապարակում հավաքված ցուցարարները, որոնց թիվը գնալով աճում էր, քարկոծել են պետական հիմնարկները՝ վնաս պատճառելով դրանց: Միայն կրակոցներից հետո ոստիկաններին հաջողվել է ցրել ցուցարարներին: Կարելի է ենթադրել, որ այդ ժողովրդական ելույթն իր ծավալով Իրանում վերջին տարիների ամենախոշոր ցույցն է: Ամռան շոգ օրերին, երբ անհնարին է դառնում չադրա կրելը, նման բողոքներ Թեհրանում եւ մյուս քաղաքներում եւս պարբերաբար տեղի են ունենում, սակայն սպահանյան ցույցը գերազանցում էր նախորդ ցույցերին: «Սալամ» թերթը վերջին շրջանում հրապարակել է նաեւ լուրեր՝ այլ կարգի ցույցերի վերաբերյալ: Հուլիսի սկզբներին քաղաքային տրանսպորտի փոխադրավարձի 500 տոկոս բարձրացման հետեւանքով Թեհրանում տեղի ունեցած ցույցերի մասին լուրը նույնպես հրապարակվել է «Սալամ» թերթում: ■

Լուրերը՝ Interfax-ի եւ մեր սեփ. թղթակիցների

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
phone: 58-1841, fax: (8-852)56-2941, telex: 243267 SULA SU
Խմբագիր՝ Յ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN
Դասիչ՝ 69149
●Macintosh համակարգչային շարուածք
Ռ.Ա.Կ. մամուլ եւ տեղեկատուութեան կենտրոնի